

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հէ ՏԱՐԻ, 2008, ԹԻԻ 5 (311) VOL. XXVII N° 5 السنة السابعة والعشرون العدد الخامس



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ



ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ



ԵՐՈՊԱ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ, ՇՈՒԷՏԻ ԵՒ ԱՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ...

ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան նախաձեռնությամբ, Յունիսի առաջին շաբաթավերջին, Փարիզի մէջ տեղի ունեցաւ ըսկառտական դաստիարակչական եռօրեայ սեմինար մը, մասնակցութեամբ՝ ՀՄԸՄ-Ֆրանսի, Շուէտի եւ Ալմելոյի (Հոլանտա) մասնաճիւղերու սկառտ պատասխանատուներուն: Սեմինարին աշխատանքները վարեց այս նպատակին համար Պէյրուսթէն գործուղուած քոյր Սեդա Պէշլեան:

Սեմինարը երկարեցաւ երեք օրուան վրայ՝ 6-8 Յունիս 2008: Մասնակիցներութիւն էր 13. ՀՄԸՄ-Ֆրանսէն քոյրեր Մարիամ Պարբօ, Նարինէ Մաքարճեան, Վիքթորիա Պարսումեան եւ Վանի Պարսումեան, եղբայրներ Պօղոս Մասպուկեան, Շանթ Զաքրեան, Յովհաննէս Պարբօ, Յովիկ Մաքարճեան, Կարէն



Պարբայեան եւ Մաքսիմ Շուէտէն քոյր Նուշիկ Միր-Աճէմեան: Ալմելոյէն եղբ-գոյեան եւ եղբ-Յովիկ Համ-ժազ Մատաղտոյեան, բարձումեան:

Նիւթը կարդալ՝ էջ 12

...ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԼԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ



ՀՄԸՄԻ Կեդրոնական վարչութեան նախաձեռնությամբ եւ Հարաւային Ամերիկայի Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ, 27-29 Յունիս 2008ին տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի Հարաւային Ամերիկայի շրջանի երեք մասնաճիւղերու (Պուէնոս Այրէս, Գորտոպա, Ուրուկուէյ) սկառտական խմբապետական կազմերու համագումարը:

Համագումարը կատարուեցաւ ՀՄԸՄ-ի Պուէնոս Այրէսի դաշտին մէջ: Աշխատանքները վարեց այս նպատակին համար Պէյրուսթէն գործուղուած քոյր Իրմա Ժէրէճեան: Կազմակերպիչ մարմնի անդամներն էին՝ եղբայրներ Արթիւրօ Պիլէճեան, Թոնի Աբիկեան, քոյրեր Սեմիլիա Տաղլեան-Սամանճեան, Սիլվա Աշճեան-Կնեազեան, Անահիտ Զաքարեան, Պէթի Սէֆէրեան եւ Վարդուշ Ազազրայեան: Մարմնի օժանդակ անդամներն էին՝ քոյրեր Սոնիա Ճիւլիանի եւ Ժազի Սէֆէրեան:


Համագումարը կը նպատակադրէր մէկ կողմէ պատրաստել համա-ՀՄԸՄ-ական խմբապետական Ե. համագումարին մասնակից խմբապետներ, իսկ միւս կողմէ ընդհանուր վերարժեւորման ենթարկել սկառտական շարքերու կազմակերպական եւ յայտագիրներու պատրաստութեան ձեւերը՝ նոր գաղափարներու փոխանցումով: Մասնակցեցան 34 խմբապետ-խմբապետուհիներ՝ 3 մասնաճիւղէ. Պուէնոս Այրէս («Արարատ»), Գորտոպա («Արագած») եւ Ուրուկուէյ («Կամբ»):

Նիւթը կարդալ՝ էջ 14



ԹԻՒԿԻՆ ՆԻՒԹԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزيك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակությունը Հ.Ս.Ը.Մ.ի
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 Ի.Է. ՏԱՐԻ, 2008, ԹԻՒ 5 (311)




24

Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Տեսակցություն 3
- Պատմություն 6
- Անդրադարձ 8
- Մասնաձիլդէ Մասնաձիլդ 12
- Մեր Կորուստները 37



36



34

ՔԱԺԻՆՆԵՐ

- Հայաստան 10
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան Ա. տարելիցին առիթով՝
 -Տիկ. Ժագլին Արզումանեան եւ զաւակները՝ Կարէն եւ
 Վազգէն Արզումանեաններ \$1000

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան
 «ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աբօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Ներսէս Արք. Բախտիկեան *,
 Շահանդուխտ, Գոհար Յարութիւնեան-
 Կոստանեան, Սալբի Լատոյեան
 եւ շրջաններու թղթակիցներ:
 Էջաղում - Ջարեհ Չէօրքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Չեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Գինիչեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ձըղուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՊՈՒՅՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՏԱՆԴԷՍԸ

(ՓԵՔԻՆԻ 29ՐԴ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ)

Աշխարհը երախտիքով կը յիշէ արդի ողիմպիականներու հիմնադիրին նշանաւոր խօսքը, թէ՛ չորս տարին անգամ մը կատարուող խաղերուն գլխաւոր արժէքը կը հանդիսանայ մրցելու ոգին: Հետեւաբար, մեծ կարեւորութիւն չի ներկայացնէր առաջնութիւն մը կամ պատուոյ դիրք մը, որ կը նսեմանայ չորս տարին անգամ մը աշխարհի երիտասարդութեան մէջ ամրապնդուող մարդկային առողջ ոգիին առջեւ:

Քուպերթէնի այս մտածումները կը բխէին ողիմպիականի մը առթիւ ըսած խօսքերէն, որոնք ոգեւորիչ էին ու հիմնական, որովհետեւ կը բանաձեւէին ողիմպիական խաղերուն իսկական նպատակը, այն է՝ մարմնակրթութիւնը միջոց ծառայեցնել ազգերու համագործակցութեան եւ բարեկամութեան:

Արդարեւ, ողիմպիականը ուրիշ բան չէ, եթէ ոչ արժէքներու ցուցադրութիւն մը: Ամպիոն մը, որուն վրայ ամէն ազգ կու գայ ներկայացնելու իր արժանիքները, չորս տարուան ընթացքին իր երիտասարդութեան ունեցած նուաճումներուն արդիւնքը:

Ողիմպիականը հաւաքական ճիգերու արդիւնաբերման տեղն է, փոխադարձ հասկացողութեան, բարոյական եւ ֆիզիքական ծիրքերու ներդաշնակութեան բարձր արտայայտութիւն մը, ազգային գիտակցութեան ամրապնդման ամուր կռուան մը:

Ողիմպիականներու ընթացքին կիրարկուող մարզաձեւերը ֆիզիքական ուժէ դուրս յատկութիւններ են, որոնք ձեռք կը ձգուին երկար ու յարատեւ աշխատանքով: Անոնցմով կը հասկնանք, թէ արուեստը կը բխի հոգիէն, որովհետեւ ֆիզիքական որեւէ արտայայտութիւն՝ վազել, ցատկիլ, լողալ եւ այլ միջոցներ կը ծառայեն մարդկային կարո-

ղութիւններու զարգացման եւ իրենց հետ անպայման կարելոր նպաստ մը կը բերեն ընկերութեան յառաջդիմութեան:

Արուեստ կայ այն մարդու շարժումին մէջ, որ կը վերցնէ 400 քլկ.: Ան իր յաջողութիւնը չի պարտիր իր ֆիզիքական ուժին, ինչպէս կ'ընեն բեռնակիրները կամ ինչպէս ժամանակին կ'ընէին ուրիշներ, երբ հսկայական քարեր կը վերցնէին՝ կառուցելու համար եգիպտոսի բուրգերը: Այդ մարդիկը իրենց ֆիզիքական ուժը կը գործածէին լոկ: Մինչդեռ արուեստը անոնց մօտ էր, որոնք կը ծրագրէին, կը յղանային եւ կը գործադրէին այդ բուրգերուն շինութիւնը:

Ողիմպիականի մրցումի մը առաջին հանդիսացողը կու լայ ուրախութենէն, երբ իր ազգային դրօշը կը բարձրանայ պատուոյ ամպիոնին կայմին վրայ, ու երբ իր ազգային քայլերգը կը հնչէ՝ աշխարհին ծանուցանելու, թէ յաղթականը կը պատկանի այդ դրօշին եւ քայլերգին:


Յաղթականը հպարտ կ'ըլլայ, որովհետեւ իր էութեան մէջ կը կրէ նաեւ հպարտութիւնը իր ազգակիցներուն: Ճշմարտութիւն մըն է ասիկա, որ ոչ մէկ հայ կրնայ ժխտել: Կա՞յ հայ մը, որ չ'ուրախանար կամ չի հպարտանար տեսնելով կամ լսելով հայու մը յաղթանակը այս կամ այն մարզաձեւին մէջ, ինչպէս Կարէն Մնացականեանի յաջողութիւնը ըմբշամարտի մէջ, Տիգրան Մարտիրոսեանի նուաճումը ծանրաբարձութեան մէջ, Դաւիթ Նալպանտեանի իրագործումը թենիսի մէջ եւ ուրիշներ:

Ահաւասիկ նշանակութիւնը ողիմպիական խաղերուն: Արժէքներու ցուցահանդէսն է ան, որուն մէջ ազգեր մեծ անձկութեամբ եւ հետաքրքրութեամբ կը սպասեն իրաւարարին սուլիչին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՏԱՑԱԾ Է ԾԱՌ-ԱՅԵԼՈՒ ԵՒ ԴԻՄԱՑԻՆԻՆ ՕԳՏԱԿԱՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔԻՆ ՄԷՁ

**Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ ԱԹՆՆՔԻ «ԱԶԱՏ ՕՐ»ԻՆ ՀԵՏ
ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՑՑԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի շրջանի Ներկայացուցչական Ժողովին առիթով, վերջերս, Աթենք այցելեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչությունն անդամ եղբ. Միխրան Շիմշիրեան: Այցելությանն օգտուելով փոխադրվեց «Ազատ Օր» օրաթերթը եղբոր հետ կարարեց հարցազրույց մը, որուն շահեկանություները նկատի ունենալով կայն կը յանձնենք ծեր ընթերցողներու ուշադրություն:



**Հ.Մ.Ը.Մ.Ի վերջին Պատգամաւորական Ժողովէն
ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը ի՞նչ ծրագիրներ
էւ թիրախներ ձգած է քառամեայ այս նստաշրջանին
համար:**

-Նախ ըսեմ, որ այս տարին յատկանշուած է Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 90ամեակին նշումով: 90ամեակի առիթով, Ընդհանուր Ժողովը պարտականութիւն տուած է Կեդրոնական Վարչութեան, որպէսզի հանդիսաւորապէս նշենք այս թուականը, մեր կառուցին բոլոր անդամներուն մասնակցութեամբ:

Այսպէս, իր առաջին լիազուտարին, Փարիզի մէջ, Կեդրոնական Վարչութիւնը եզրակացուց, որ Հայաստանի մէջ նախատեսուած 90ամեակի տօնակատարութիւնը ընդգրկէ յատուկ խորհրդաժողով մը, որուն պիտի մասնակցին գիտնականներ՝ ուսումնասիրելու համար Հ.Մ.Ը.Մ.Ի գաղափարաբանութիւնը եւ, իրենց ակնոցով դիտուած, արժեւորումը պիտի կատարեն միութեան 90ամեայ գործունէութեան:

**Իրայատուկ գաղափար մըն է: Ե՞րբ կը նախատեսք
կազմակերպել խորհրդաժողովը եւ ո՞ր հանգրուանին
մէջ կը գտնուիք ներկայիս:**

-Կազմակերպչական մանրամասնութիւններու դասաւորման հանգրուանին մէջ կը գտնուինք այս պահուս: Իսկ խորհրդաժողովին գումարումը կը նախատեսենք կատարել Սեպտեմբերին:

Երկրորդ ծրագիր մըն է Հ.Մ.Ը.Մ.Ի գաղափարախօս եւ հիմնադիր Շաւարշ Քրիսեանի անունով լսարանի մը ստեղծումը Երեւանի Պետական Համալսարանին մէջ:

Այս երկուքը Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կողմէ

կազմակերպուած յատուկ ձեռնարկներ պիտի ըլլան:

Ծրագիր մըն ալ ունէինք 90ամեակի առիթով Հայաստանի մէջ դրոշմաթուղթ հրատարակելու, սակայն զանազան պատճառներ ուշացուցին այդ ծրագրին իրականացումը:

Յաւելեալ, անշուշտ, մեր բոլոր շրջաններուն թելադրած ենք, որպէսզի 90ամեայ յոբելեանը նշող ձեռնարկներ կազմակերպեն: Շրջաններ կան, որոնք իրենց տարեկան մարզախաղերը կը նուիրեն 90ամեակին, կամ՝ յոբելեանական յատուկ ձեռնարկներ կը կազմակերպեն:

Այս ծիրէն ներս որոշ պարզեւատրումներ ալ պիտի կատարուին այն Հ.Մ.Ը.Մ.Ի ակններուն, որոնք աշխատանք տարած են միութեան օգտին եւ մինչեւ օրս չեն պարզեւատրուած:

Այս տարի համահայկական բանակում պիտի կազմակերպուի՞:

-Ո՛չ. այսպիսի պարտաւորութիւն չորս տարին անգամ մըն է, որ ունինք:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեայ աշխատանքներու ծիրէն ներս կը նախատեսէ Համա-Հ.Մ.Ը.Մ.Ի ակն մարզախաղեր, Համա-Հ.Մ.Ը.Մ.Ի ակն սկսողական բանակում, Հ.Մ.Ը.Մ.Ի դիւաններու համաժողով, սկսող խմբապետներու բանակում-համագումարը (որ այս տարի Օգոստոսին պիտի կատարուի): Պէտք է ըսեմ, որ նման բանակում մինչեւ հիմա չենք ունեցած. անցեալին ունեցած ենք խմբապետներու համագումարներ, ուր ընդհանրապէս ծրագրուած են Համա-Հ.Մ.Ը.Մ.Ի ակն բանակումները: Այս տարուան հաւաքը իր մէջ կ'ընդգրկէ նախապատրաստական

աշխատանք՝ չորս տարուան ընթացքին Արարատեան կարգ ստանալու համար: Արարատեան կարգը սկսուտական աստիճան մըն է եւ կը տրուի ընթացիկ կարգերէն անցած եւ բաւական յաւաքացած խմբապետներու: Անոնք պարտին որոշ ուսումնասիրութիւններ կատարել սկսուտական աշխատանքներու շուրջ:

Մենք կը փափաքինք, որ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ բանակումին (որ երեք տարի ետք պիտի կազմակերպուի) խմբապետութիւնը յանձնուի Արարատեան կարգ ստացած անձերու: Այլեւս աւելի արհեստավարժ ու պատրաստուած խմբապետներու պիտի վստահինք այդ աշխատանքը եւ կը յուսանք, որ պիտի յաջողինք այս ձեւով նորութիւններ մտցնել մեր բանակումներուն մէջ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու գծով ի՞նչ որոշուած է:

-Գիտէք, անշուշտ, որ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը Հայաստանի մէջ կազմակերպելու որոշում տուաւ միութեան վերջին Պատգամաւորական Ժողովը: Կեդրոնական Վարչութեան առաջին լիազուումարին քննեցինք խաղերը նաեւ Արցախ կազմակերպելու պարագան՝ մտածելով, որ ատիկա աւելի ճիշդ ու նպատակայարմար պիտի ըլլար տուեալ պահուն: Այդ ուղղութեամբ հետաքրքրուելու պարտականութիւն ալ ստանձնեց Կեդրոնական Վարչութիւնը, սակայն ի յայտ եկաւ որ Արցախը ներկայիս Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր ընդունելու միջոցներ չունի: Ֆութպոլի մէկ մարզադաշտ կայ, պասքէթպոլի դաշտեր չկան, լողաւազան չկայ...: Մենք կ'ուզենք բոլոր մարզաձեւերը ներառել՝ առաւելագոյն թիւով մարզիկներու առիթը տալով, որպէսզի մասնակցութիւն բերեն խաղերուն: Անշուշտ, յոյս ունինք, որ Արցախի մէջ մարզական կառույցները կը զօրանան եւ բախտաւոր օր մը հոն կը կատարենք մեր մարզախաղերը:

Ըսեմ, որ Պատգամաւորական Ժողովի որոշումով, Կեդրոնական Վարչութիւնը ձեռնարկած է նաեւ կազմակերպումին միջ-ցամաքամասային սկսուտական պատասխանատուներու հանդիպումի մը, որ յաճախակի պէտք է դառնայ: Կը փորձենք տարեկան դրութեամբ կատարել հանդիպումը՝ բարձրաստիճան սկսուտները քով-քովի բերելու մտքով եւ յատուկ գիտելիքներ անոնց փոխանցելու համար, որպէսզի պատրաստուին Արարատեան կարգի աստիճանին տիրանալու:

Եւրոպայի ո՞ր երկիրներուն մէջ կազմեր ունինք ներկայիս:

-Յունաստան, Կիպրոս, Պուլկարիա, Հունգարիա, Վիեննա, Շուեյտ, Հոլանտա, Լոնտոն, Փարիզ, Վալանս եւ Մարսէյլ: Այս է Եւրոպայի մէջ մեր կառույցը: Տուեալ ցամաքամասէն ներս միակը, որ Շրջանային Վարչութեան կարգավիճակ ու-

Այսօրուան աշխարհը մարդիկը կը մղէ առանձնութեան: Միաժամանակ, պատասխանատուութեան գիտակցութիւնը նուազած է երիտասարդութեան մօտ: Մենք, իբրեւ հայ, մեր շրջապատին մէջ այս օրերը կը դիմագրաւենք այս երեւոյթները, սակայն միջազգային առումով տազնապ է այս հարցը:

նի, Յունաստանն է, իսկ մնացեալները՝ Մեկուսի Վարչութիւններ են:

Ինչպէ՞ս կը գնահատէք Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի գործունէութեան մարզերը:

-Յունաստանը Կեդրոնական Վարչութեան համար մեծ աւանդութիւն ունեցող շրջան մըն է. երկար պատմութիւն ունի եւ կարելի է գայն բաղդատել նորաստեղծ այլ շրջաններու հետ: Յունահայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ը գիտէ եւ կը սիրէ: Նոյնը կարելի է հաստատել կարգ մը այլ շրջաններու համար: Օրինակի համար, Հոլանտայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան ծանօթ հայրենակիցները մեծ մասով Միջին Արեւելքէն գաղթած մեր հայրենակիցներն են: Գրեթէ նոյնն է կացութիւնը Եւրոպայի նորաստեղծ հայ գաղութներու մեծամասնութեան մօտ:

Յունաստանը ատենին Կեդրոնական Վարչութիւն կոչուած Շրջանային Վարչութիւն ունեցած է. աւանդ ու պատմութիւն ունի եւ ճիշդ ասոր համար Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Յունաստանի հանդէպ տարբեր՝ զգացական մօտեցում մը ունի: Եւրոպա է, բայց նաեւ ուրիշ է Ֆրանսայէն, Լոնտոնէն, եւ կը փափաքինք Յունաստանը միշտ տեսնել իւրապատուկ իր այս դերով: Դուք լաւապէս գիտէք այս պարագան, որովհետեւ տեսած էք այն վստահութիւնը, որ ցուցաբերուած է Յունաստանի միաւորին հանդէպ: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին բանակումը Յունաստանի մէջ կազմակերպուած է, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մեր Գ. բանակումն ալ Յունաստանի մէջ եղած է: Ընդհանուր Ժողովներ եւս գումարուած են հոս: Բնականաբար, այս բոլորը ցոյց կու տան Յունաստանի իւրապատուկ տեղը Կեդրոնական Վարչութեան մօտ:

Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի կառույցները որքանո՞վ նոր կարելի է նկատել:

-Շուեյտը, Հոլանտան բոլորովին նոր շրջաններ են, կազմուած՝ ընդհանրապէս Միջին Արեւելքէն գաղթած հայրենակիցներու մասնակցութեամբ:

Լոնտոնը եւս համեմատաբար նոր շրջան է (պարսկահայերէ կազմուած գաղութ է ընդհանրապէս):

Փարիզը այդպէս չէ: Փարիզի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը հարուստ պատմութիւն ունեցած է: Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լուծարումէն ետք, Փարիզ հաստատուած է Հ.Մ.Ը.Մ.ի շարժումը եւ Կեդրոնական Վարչութիւնը: Այդ պատասխանատուները հետագային ինչ-ինչ պատճառներով հեռացած են Փարիզէն: 1980ականներուն Հ.Մ.Ը.Մ.ը վերակազմակերպուեցաւ Ֆրանսայի մէջ՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս անուանով: Դիւաններու ժողովներ եղած են հոն: Մենք մեր լիազումարները կը կատարենք, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկսուտական բանակում կազմակերպուած է... եւ այլն:

Իւրայատուկ է Պուլկարիոյ պարագան, որովհետեւ հոն եւս Հ.Մ.Ը.Մ. գոյութիւն ունեցած է մինչեւ համայնափարական կարգերու հաստատում: Այնուհետեւ, բոլոր աշխատանքները առկախուած են: Քաղաքական փոփոխութիւններէն ետք, տարեց Հ.Մ.Ը.Մ.ականներ դուրս բերին միութիւնը սառած վիճակէն եւ գործունէութիւն ծաւալեցին: Սակայն, պատանիներուն եւ երիտասարդներուն համար միութիւնը նոր հասկացողութեամբ պէտք է ներկայանայ: Ճիշդ պիտի չինայինք գործիչներ ուղարկելու եւ երիտասարդ տարիքի տղոց մօտ կորիզներ ստեղծելու:

Օգոստոսին, Պուլկարիոյ հինգ քաղաքներու մէջ գործող մեր կազմերը մօտ-մօտի գալով բանակում պիտի կատարեն: Նոյնպէս, բոլոր քաղաքներու մէջ գործող մեր վարչականներու մասնակցութեամբ սեմինար մը պիտի կազմակերպուի եւ Կեդրոնական Վարչութիւնն ալ ներկայ պիտի ըլլայ, օժանդակելու համար աշխատանքներուն: Կը կարծենք, որ ճիշդ քայլերու կը դիմենք՝ աշխատանքին ծաւալ տալու նպատակով:

Հայաստանի պարագային ի՞նչ պատկեր կը ներկայացնէ միութեան կառոյցը:

-Հայաստանը պէտք է տեսնենք իր իսկական վիճակին մէջ: Միայն պիտի ըլլայ եթէ Լիբանանի, Սուրիոյ կամ Ամերիկայի մեր կառոյցներուն հետ բաղդատենք ու նոյն ձեւով դիտենք հայրենիքի մէջ մեր միութիւնը:

Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի անունը փաստօրէն ծանօթ դարձած է Միւրաբէն եկած մեր միութեան անդամ երիտասարդներուն եւ պատանիներուն միջոցով: Յանկարծ, երբ երկրի քաղաքական իրավիճակը հնարաւորութիւն տուաւ աշխատանք ծաւալելու, Հ.Մ.Ը.Մ.ական գաղափարով սնած տղաք կորիզներ հիմնեցին: Արագօրէն կազմուեցաւ վարչութիւն, աշխատանք տարին, դրանցուեցան: Այսպէս կայացաւ մեր միութիւնը: Հիմնական գաղափարն էր օժանդակել Հայաստանի կացութեան: Մենք յաջողեցանք սկստական կորիզներ ունենալ տարբեր-տարբեր շրջաններու մէջ: Բոլորը սկստական էին, ո՛չ մարզական: Փորձ տարուեցաւ մարզական խումբեր ալ ստեղծելու, սակայն այդ մէկը չչարունակուեցաւ, որովհետեւ Հայաստանի մէջ մարմնամարզը ունի արհեստավարժ մօտեցում:

Հ.Մ.Ը.Մ.ականներու թիւի աճով եւ Հայաստանի մասնաճիւղերու անդամներու թուային ներկայ պատկերով, շեշտակի անհրաժեշտութիւն դարձած է հայրենիքի մէջ յանձնառու պատասխանատուներու պատրաստութիւնը, որպէսզի ճիշդ ձեւով գործէ կառուցային մեր դրութիւնը:

Աշխատանք տարուեցաւ նաեւ, որ Հայաստանի մեր կազմը ընդունուի միջազգային սկստական շարժումին մէջ: Այսօր Հայաստանի մեր կառոյցը ներառուած է համաշխարհային սկստական կառոյցէն ներս, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անունով եւ Հ.Մ.Ը.Մ.ի շուշանածաղիկով:

Ջաւախքի մէջ կառոյց ունի՞՞նք:

-Հակառակ որ շատ աշխատանք տարած ենք Ջաւախքի մէջ կառոյց ստեղծելու ուղղութեամբ, սակայն ցարդ չենք կարողացած այդ ծրագիրը իրականացնել: Դեր խաղացած են նաեւ նիւթական դժուարութիւնները: Ընդհակառակը, սակայն, Մոսկուայի մէջ շարժում ունինք: Կը յուսանք որ հետըհետէ աւելի պիտի ծաւալի այդ կորիզին աշխատանքը:

Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի մարզական-սկստական գաղափարաբանութիւնը որքանով կը յուզէ երիտասարդները, գէթ այն ձեւով եւ սկզբունքներով, որ նախորդ սերունդները ջամբած էին:

-Դժուար է իսկապէս գնահատել ներկայ պայմանները: Այսօրուան աշխարհը մարդիկը կը մղէ առանձնութեան: Միաժամանակ, պատասխանատուութեան գիտակցութիւնը նուազած է երիտասարդութեան մօտ: Մենք, իբրեւ հայ, մեր շրջապատին մէջ ա՛յս կը տեսնենք եւ առօրեայ ճիւղով կը դիմազրուակենք այս երեւոյթները, սակայն միջազգային առումով տաքնապ է այս հարցը: Անշուշտ, կը համակերպինք նոր սիւտեմներու անպատեհութիւններուն, բայց պէտք է օգտուինք նաեւ ներկայի բարիքներէն: Մեր միութեան ողնասիւնը կը կազմէ սկստականութիւնը, որ հայ անհատին մօտ պատանի տարիքէն կ'ապահովէ յաջողական սերունդներու հայաշունչ դաստիարակութիւնը:

Միւրաբէն մէջ հայ երիտասարդը հայ պահելու աշխատանք տարած ենք միշտ: Մեր մատուցած սերունդներուն փորձած ենք սորվեցնել յարգանքն ու սէրը մեր կառոյցներու աշխատանքին հանդէպ: Տարիներու ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը խտացած է ծառայելու եւ դիմացիներին օգտակար դառնալու սկզբունքներն մէջ, ինչպէս նաեւ հայութիւնը պահելու եւ հայ ազգի արժէքները գերազանցօրէն պահպանելու առաջնահերթութեան մէջ:

Գնահատելի է ձեր պաշտօնաբեր «Մարզիկ»-ի իրատարակութիւնը, որ արհեստավարժ եւ բարձր մակարդակի կանոնաւոր դրութեամբ պարբերաբեր է:

-Պէտք է ըսել, որ «Մարզիկ»ը մեր գուրգուրանքին առարկան է. վերիվայրումներէ անցնելէ ետք, այսօր լաւ վիճակի մէջ է. բոլոր շրջանները կը գործակցին եւ, բացի գործունէութեան արձագանգումէն, նաեւ միութեան գաղափարաբանութիւնը արտայայտող հրատարակութիւնն է: Ձեր շրջանէն եղբար պիտի Գուրգուրեան երկար տարիներէ ի վեր բծախնդրութեամբ կատարած է թղթակիցի պարտականութիւնը եւ չափազանցութիւն չէ եթէ ըսեմ, որ իր թղթակցութիւններուն ընդմէջէն հին թէ նոր «Մարզիկ»ները թղթատելով՝ կարելի է Յունաստանի գաղութին պատմութեան լաւապէս տեղեկանալ:

Տարիներու ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը խտացած է ծառայելու եւ դիմացիներին օգտակար դառնալու սկզբունքին մէջ, ինչպէս նաեւ հայութիւնը պահպանելու եւ հայ ազգի արժէքները գերազանցօրէն պահպանելու առաջնահերթութեան մէջ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



1925. Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի վարչությունը: Նստած, ձախտն աջ՝ Վահրամ Չոքբարեան եւ Ջարեհ Տօնապետեան: Ոտքի, ձախտն աջ՝ Տիրան Օհանեան, Յարութիւն Թահմազեան, Երուանդ Ունճեան, Սիսակ Պոյաճեան եւ Յարութիւն Ինճեճիեան:

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Գ. ՄԱՍ

Հայկական տկար ճիգին օգնութեան կը փութար հեռաւոր Ամերիկան՝ տոլարներու իր դէզով: Եւ սակայն դժուար էր թափանցել թրքական հողերէն ներս: Պէտք էր խորտակուէին Երիթովի պարիսպները:

Կովկասի ճակատի հայկական գունդներուն կազմութեան ու թրքական հողերէն ներս իրենց յառաջացումին գողզըն-

թաց, հարաւէն, 1918 Սեպտեմբերին, Դաշնակիցներուն կողմէ եւ հայ լէգէոնականներու աննուաճ կամքին չնորհիւ, Արարայի յաղթական ճակատամարտէն ետք, Կիլիկիոյ գրաւումը, Պաղեստինի, Սուրիոյ եւ Միջագետքի անծայրածիր տարածութիւններուն վրայ վերապրող հայ խլեակներուն ապրելու եւ տեսելու հաւատքի նոր ափսոսանք կը բանար եւ անոնք, տարազիր բեկորները, զանգուածային ներգաղթի կը սկսէին Կիլիկիոյ հողերէն ներս: Անոնք կու գային լծուելու շինարար աշխատանքի, աւելի ազատ պայմաններու մէջ:

Ձինադադարի ազդանշանը հազիւ տրուած, Ամերիկայի մէջ, 1915 Սեպտեմբեր 16ին կազմուած Հայկական Նպաստամատոյցի Մարմինը, վաւերացուած երեսփոխանական ժողովին կողմէ, իբրեւ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց անունով, կը նետուի Սուրիոյ, Թուրքիոյ եւ Կովկասի խորերը՝ իրագործելու մարդասիրական իր առաքելութիւնը: առաքելութիւն մը որուն լծակից կ'ըլլան Դանիան ու Չուխցերիան իրենց զաւակներով՝ Քառէն Եփփէներով ու Ճէյքըպսըններով, Քիւնեճըրներով եւ գերման Լեփսիւսներով:

Ապրիլեան Եղեռնի հայկական գողգոթան մէկ միլիոնէ աւելի հայեր խլելէ ետք, իր ետեւ ձգեց հինգէն տասը տարեկան որբ ու որբուհիներու հսկայ բանակ մը: Անոնք, ցեղին անժառանգ տառապածները, հաւաքուած Վոսփորի ափերէն, Կապադովկիոյ շրջաններէն, Կիլիկիայէն մինչեւ Տէր Զօր, հաւաքուած փողոցներէն, թուրքերու, քիւրտերու, եգիպտացիներու, չէչէններու ու արաբներու քովերէն, անոնք, այս բոլոր միջավայրերէն ու ժողովուրդներէն ազդուած, անուն ու մականուն մոռցած, մոռցած մեր մեծաքանակ լեզուն, մոռցած հայ բնատոհմիկ սովորութիւններն ու բարքերը: Հայ որբաշխարհն էր որ մուտք կը գործէր իր ազգին շէնքէն ներս, որբանոցներու ճամբով:

Ո՞վ պիտի կերտէր քառսի վերածուած անապատի այս բեկորներէն վաղուան հայր: Եթէ Ամերիկեան Նպաստամատոյցը մարդասիրական ու համամարդկային ոգիի զգացումէն մղուած մեզի մօտեցաւ, ցեղին տեսականութեամբ մտահոգւող անձնուրացներուն կը մնար պրկել ջիղերը, լայն բանալ իրենց սրտերը, դառնալ ոգի ու միտք, մէկ յայտարարի վերածելու այս խառնարանը, յառաջացնելու միատարր սերունդ մը, ազգ մը, մէկ մշակոյթով, մէկ իր ազգային-քաղաքական ու հոգեւոր գիտակցութեամբ:

Առանց սիրոյ եւ գգուանքի հասակ նետող մեր պատմութեան ամէնէն դժբախտ այս սերունդին խոցուած սրտին խորը վշտի ափսոսանք էին բացուելը: Ապրիլեան Եղեռնի ահաւոր

ողբերգուլթիւնը անոր թարմ ուղեղին վրայ դրոշմ դրած էր: Հոգեկան ու ֆիզիքական տառապանքը իրենց աւերները գործեր էին: Այս բոլորը պէտք էր հակակշռել՝ կանխելու համար նուաստաբարդոյթի մը ասաւոր պատկերը, որ կրնար ջլատել, մարել անոր մէջ ապրելու կորովը, դարձնելով զայն կամակոր խլեակ մը, որուն բնակավայրը պիտի ըլլային օտարին դռները, փողոցները, մայթերուն անկիւնները:


1918ին, անգլիական յաղթական բանակին Հայէպ մուտքին, տառապանքի ծովուն մէջ հալ ու մաշ վերապրող հայը, ազատաբեր բանակին ի տես, կենսունակութեան նշաններ ցոյց կու տայ, ու նոյն օրերուն ծնունդ, ցեղապաշտ ոգիի աւելում գրուած երգը՝ «Յաւա՛ջ, նահատակ ցեղի անմահներ...» շրթունքին կը սկսի արագ վերականգնումի ծանր աշխատանքին լծուիլ, կազմակերպելով սերունդին մտային, հոգեկան ու ֆիզիքական դաստիարակութեան գործը:

Հայ վերապրող մտաւորականն ու երիտասարդը, որոնց վիճակուած էր լծուելու այս ծանր աշխատանքին, պէտք էր քով-քովի գային, ուժ գոյացնէին, որպէսզի կարենային ասաւոր աւերումէն ետք, իբրեւ փրկիկ իր աճիւններէն բարձրանալ ու մարդկային ցեղին համաստեղութեան մէջ իր տեղը գրաւել: Հայկական վերագարթնումի ընդհանուր այս ճիգին մէջ, Հայէպի երիտասարդութիւնը չէր որ անմասն պիտի մնար. ան պէտք էր հայու իր հպարտ ճակատը բարձրացնէր տառապանքի վայրերու՝ Սէպիլի ու Հոգետան վայրերու վրայ իսկ: Ու ասա, նախապատերազմեան շրջանի «Աղբիւր» մարմնամարզական ակումբին հետքով, 1918ին կեանքի կը կոչուի «Համազասպ» մարզական միութիւնը, ծանօթ նաեւ «Աղբիւր միութիւն» անունով, որ պիտի հովանաւորուէր, սնունդ եւ ուժ ստանար նոր կազմուած Հայ Երիտասարդաց Միութեան կողմէ:

Ընդհանուր երեւոյթով, «Արագ-արագ կը կազմուէին միութիւններ, ակումբներ, կը բացուէին դպրոցներ եւ եկեղեցիներ: 1918ին վերաբացուեցաւ Ազգ. Ներսէսեան վարժարանը եւ ուրիշ նոր նախակրթարան մը՝ Հայկազեան վարժարան անունով: Հայկազեանի մէջ, մարզիչ-ուսուցիչ Վառապետ Ինկիլթեանի ջանքերով, հայ դպրոցներէն ներս կը վերսկսի մարմնամարզը: Իր մեկնումէն վերջ, Հայկազեանի տնօրէն փրոֆ. Տաղլեան վարժարանի մարմնամարզի պաշտօնը կը յանձնէ մարզանքի ուսուցիչ Լեւոն Աբգարեանի»⁽¹⁾:

Ներսէսեան վարժարանն ալ, հազիւ ինքզինք գտած, մարզանքի համար այցելու ուսուցիչ կը հրաւիրէ Աբգարեանը: Այս կերպով, մարզանքի շարժումը դպրոցներէն ներս, յետ պատերազմի, կը մտնէ կանոնաւոր հունի մէջ:

«Այդ ամիսներուն, մարզանքի կարեւորութիւնը պէտք եղածին պէս ըմբռնելով, հայկական որբանոցը նաեւ իր որբերուն համար կը բանար մարզանքի դասընթացը:



1925. Ազգ. Հայկազեան վարժարանի «Կայծակ» խումբը: Խմբապետ՝ Փիլիպպոս Դերձակեան:

«Հայ կաթողիկէ վարժարանը եւս խրախուսուած՝ Հայ Ազգ. վարժարանի ամավերջի հանդէսի մարմնամարզի յաջողութիւններէն, հայ մարզիչ-ուսուցիչը կը հրաւիրէ որպէսզի յաջորդ շրջանին գոնէ իրենց վարժարանի մարզանքի դասերն ալ ստանձնէ: Իսկ հայ կաթողիկէներու ամավերջի հանդէսին ներկայ ըլլալով, կուսակալը եւ քանի մը արաբ վարժարաններու տնօրէններ, իրենց գոհունակութիւնը կը յայտնեն: Արաբ վարժարանի տնօրէններէն մէկը, իր դպրոցի վերամուտին, հայոց Աւետարանական Ժողովի ատենապետին կը դիմէ, որպէսզի իրենց մարզիչ-ուսուցիչը արաբ վարժարանի մէջ եւս մարզանքի դաս տայ»⁽²⁾:

Այսպէս, 1918էն սկսեալ, մարզանքը իր հունը կը գտնէ Հայէպի հայ զանգուածին մէջ, որ այնքան պէտք ունէր հոգեկան ու մտային զարգացման հետ նաեւ ֆիզիքականին:

Վստահօրէն, զինադադարէն ետք, Հայաստանի ազատ հողին վրայ թէ Կիլիկիոյ սահմաններէն ներս, հայր օտարներու ժամանակաւոր նիւթական օժանդակութեամբ՝ որբերու խնամքին գործին մէջ, ու մանաւանդ իր ձեռներէց ոգիին մղումով, կարճ ժամանակի ընթացքին իր ողնայարը շտկէր, բայց աւա՛ղ հայուն վիճակուած չէր խաղաղ կեանքի մը մշտատեւ գեղեցիկ վերելքը վայելելու անհուն հրճուանքը ըմբռնելու: Հայուն սահմանուած չէր երկար մնալու տակաւին կառուցուելու վրայ եղող իր նոր օճախներուն մէջ:

(Շար. 3)

1. «Սուրիաշայ Տարեգիրք», 1914:
2. Նոյնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌԸ

Շահանդուխտ ՊՈՒՐՑ ԿՍՍՈՒՏ

Աշխարհագրական հեռավորությունն է գլխաւոր պատճառը յաճախակի կապեր հաստատելու մեր հեռավոր գաղութներուն հետ, ինչպէս Հարաւային Ամերիկայի երկիրներու հայկական գաղութներ՝ Արժանթին, Պրագիլ, Ուրուկուէյ, Վենեզուելա: Այսուհանդերձ եւ, բարեբախտաբար, Միջին Արեւելքէն պարբերաբար այցելութիւններ կը կատարւին յիշեալ գաղութներ: Մշակութային, մարզական, կուսակցական կամ կրթական դաշտերու մէջ իրենց վաստակը հաստատած գործիչներ կ'ուղղուին այդ երկիրները եւ նոր աւել ու եռանդ կը ներարկեն տեղւոյն նոր սերունդին, հայապահպանման աշխատանքները կենսաւորելու:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան հրահրումով, վերջերս, Հարաւային Ամերիկա հրաւիրուեցաւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, 1972էն ի վեր Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն մաս կազմած եւ հետզհետէ պատասխանատու պարտականութիւններ ստանձնած Իրմա Ծէրէճեան: Ան նոյն ատեն փորձառու մանկավարժ է եւ ստանձնած է Ազգ. Ս. Քառասնից Մանկանց վարժարանի մանկապարտէզի տեսչութեան պաշտօնը, զոր կը կատարէ ամենայն ձեռնհասութեամբ:

Բարեկամութեան ճամբով իմացանք Իրմա Ծէրէճեանի գործուղումը դէպի արեւադարձային գօտիներ, եւ խնդրեցինք իրմէ պատմել իր նոր փորձառութեան մասին ընդհանրապէս եւ յիշեալ գաղութներու կեանքին մասին մասնաւորապէս: Մեր կարգին վաղեմի փորձառութիւն մը մեզ կը մղէր իմանալու Արժանթինի եւ Ուրուկուէյի մէջ կատարուող հայապահպանման իրագործումներու մասին: Հաւանաբար կային նորութիւններ, նոր ծրագիրներ:

Օգոստոսին Հայաստանի մէջ տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին յատկացուած համադրումար, որուն պիտի ներկայանան նաեւ Սփիւռքի

Հ.Մ.Ը.Մ.ական մասնաճիւղերու կամ շրջաններու ներկայացուցիչներ, սկաուտական խմբապետական խորհուրդներու անդամներ: Այս առիթով, իբրեւ սկաուտական մարզի մէջ որոշ փորձառութիւն ունեցող պատասխանատու, ընդառաջեցի հրահրին, եւ երկու շաբաթ տեւողութեամբ հանդիպումներ ունեցայ Պուէնոս Այրէսի, Գորտոպայի եւ Ուրուկուէյի մարզամշակութային կառույցներուն հետ: Զաննք տեղեակ պահեցի սկաուտական եւ հայրենասիրական տարբեր հարցերու մասին: Սկաուտական խաղերու, կանչերու, նոր ծրագիրներու շուրջ կատարեցի գործնական աշխատանքներ, փորձարկումներ, որոնք շատ հաճելի եւ հետաքրքրական եղան հետեւողներուն:

Ըսեմ, թէ մեր այս հեռավոր գաղութները կարիքը եւ կարօտը ունին ամէն մարզի մէջ մասնագէտ անձերու, որպէսզի լքուած չզգան,- ըսաւ ան:

- «Մեզմով հետաքրքրուողները շատ քիչ են, գոնէ տարին մէկ այցելու ունենանք, որպէսզի տեղեկանանք, թէ ի՞նչ պէտք է ընենք մեր հայկական կեանքը աշխուժացնելու: Մենք կարօտը ունինք գիրքերու, դասագիրքերու, նոր օրերու յատուկ զիտեղիքներ փոխանցող միջոցներու», կ'ըսեն անոնք ցաւօք սրտի...»

Իրմա Ծէրէճեան այցելութիւններ տուած է հայկական վարժարաններու, տեսած է եկեղեցին հայկական, այցելած է «Արմենիա» համալիրը, որ օժտուած է «Արմենիա» շաբաթաթերթի խմբագրատունով, թատերասրահով, ժողովասրահներով եւ յարակից արդիական բաժանմունքներով: Ան գովեստով խօսեցաւ Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին ու անոր սրահներուն մէջ կատարուած աշխատանքներուն մասին, մասնաւորաբար՝ շաբաթավերջի երկու օրերուն: Հոն կու գան հայ ընտանիքներ, կը վայելեն մտերմութիւնը մարզիկներու, սկաուտներու, ընտանիքներ իրենց դեռատի գաւակները կը բերեն հոն՝ ընտելացնելու հա-



ԱՐԵՒԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՕՏԻՆԵՐՈՒ ՄԷՋ



մար Հ.Մ.Ը.Մ-ին եւ սկսողական շարժումներուն:

Մեր գրողակիցը հիացումով արտայայտուեցաւ Գորտոպայի, Ուրուկուէյի հայկական վարժարաններուն մասին, ուր գրոյցներ ունեցած է ուսուցչական կազմերուն հետ եւ անոնց թելադրած է հետեւիլ «Ազգակ» օրաթերթի կայք էջին, տեղեկութիւններ քաղելու համար լիբանանեան եւ այլ գաղութներու կեանքէն:

Ուրուկուէյի «Կոմիտաս» ամէնօրեայ ռատիոկայանը կարեւոր գործօն մըն է մշակութային եւ գեղարուեստական, նաեւ ազգային տեղեկութիւններ փոխանցող: Պուէնոս Այրէսի մէջ կայ նաեւ «Արարատ» ռատիոժամը, որ իր կարգին տեղեկութիւններ կը փոխանցէ գաղութահայութեան:

Թահայութեան:

- Կ'ուզեմ յատուկ փոխանցում մը կատարել Գորտոպայի «Գուսան» նուագախումբին եւ անոր կազմակերպած գեղարուեստական հանդիսութիւններուն, համերգներուն մասին, որուն կը մասնակցի նաեւ «Նայիրի» պարախումբը, երգչախումբը: «Գուսան» նուագախումբը կը ղեկավարէ եւ երկար տարիներու ներդրում ունի երաժիշտ-երգահան Հենրիքէ Աւագեան, որ իր երեք որդիներով՝ Բաֆֆի, Արամ եւ Վարդան, երեքն ալ հայկական երաժշտական գործիքներ նուագող, նաեւ՝ անոնց հօրեղբայրը, «Գուսան»ը վերածած են երաժշտական անսպառ աղբիւրի, որ ոչ միայն Գորտոպայի, այլեւ Հարաւային Ամերիկայի գաղութներուն կը ներկայացընէ հայ հարազատ երգին ու երաժշտութեան քաղցրութիւնը: «Տեսակցութիւն ունեցայ «Գուսան»ի պատասխանատուներուն հետ, որոնք փսփսուքով արտայայտեցին իրենց բաղձանքը՝ արդեօք Համազգայինը մեզ Լիբանան չի՞ կրնար հրաւիրել»:

Իրմա Ճէրէճեան իր գրոյցի պահուն շեշտը դրաւ սպանա-



խօս այս գաղութներուն հայոց լեզուն չօգտագործելու ցաւին վրայ:

- «Ո՛ւր որ գացի, շեշտը դրի հայերէնախօսութեան վրայ: Առանց հայ լեզուի հայապահպանում դժուար կը կատարուի», ըսի իրենց: Ոմանք կը հարցնէին.

- «Դուք ձեր տուններուն մէջ իրարու հետ արաբերէն չէ՞ք խօսիր...»:

- Ո՛չ, պատասխանեցի: - Բոլորս ալ լաւ արաբերէն գիտենք, բայց այս լեզուն կը խօսինք տեղացի արաբախօսներուն հետ, շուկայի մէջ եւ այլն...:

Տեսայ հայր մը, որ իր պատանի զակին հարցումներ կ'ուղղէր հայերէնով: Ան քիչ առաջ իր բարեկամին հետ սպաներէն կը խօսէր: Առանց քաշուելու՝ ըսի անոր.

- «Եղբայր, քանի որ այսքան լաւ հայերէն կը խօսիս, ինչո՞ւ չուրջիններուդ հետ սպաներէն կը խօսիս, անոնք բոլորն ալ հայեր են...»:

- Մարդը լուռ մնաց, իր տեղը պատասխանեց իր պատանի որդին:

- Քո՛յր Իրմա, առաջին անգամ ըլլալով կը լսեմ հօրս հայերէն խօսիր...:

Մեր գրոյցը երկար տեւեց, բայց մեր սիւնակները «կը սիրեն» ամփոփ գրոյցները: Քոյր Իրմա կ'եզրակացնէ իր գրոյցը իր կատարելիք աշխատանքներուն մասին՝ օգտակար ըլլալու համար մեր հեռաւոր գաղութներուն.

- Արդէն պատրաստած եմ գիրքեր, այլազան պիտոյքներ, ինչ բանի որ կարիք ունին: Պէտք է օգնենք անոնց, որպէսզի այս գաղութները չկորսուին: Անոնց ըսի, թէ՛ «Դուք ծառի մը արմատներն էք՝ 100 տարիէ աւելի հոս արմատ կապած: Հասուն տարիքի հայեր թող ըլլան արեւ, լուսաւորեն իրենց շուրջը, իսկ նոր սերունդը ըլլայ ջուր՝ ջրտուք կատարելու այս արմատ կապած ծառին, որպէսզի ան յաւէտ մնայ ծաղկուն, նոր ոստերով»:

Սփիւռքը, այս տարածուն աշխարհը, որքա՞ն պիտի դիմանայ արդեօք օտար հովերուն եւ այրող արեւներուն... ա՛յդ իսկ է հարցը...:

Այս առիթով յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը նոյն առաքելութեամբ անցնող Յունիսին Յրանսա գործուղեց Սեղա Պէշլեանը՝ կազմաւորելու եւ պատրաստելու համար Հ.Մ.Ը.Մ-ի Եւրոպայի խմբապետական շարքերը:

Նոյն առաքելութեամբ, յառաջիկայ Օգոստոսին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը պատուիրակութիւն մը պիտի առաքէ Պուլկարիա, Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն սկսողական-խմբապետական եւ այլ միաւորներու կազմակերպական աշխատանքները հունաւորելու:


ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Գոհար Յարութիւնեան-Կոստանեան
ԵՐԵՒԱՆ

Շատ դժուար է գրել հարազատի մը մասին, բայց Յովհաննէս Շիրազ (Յովիկ) Կոստանեանը արժանի է այդ դժուարութեան յաղթահարման:



Յովիկը փոքր հասակէն կը սիրէր պատկերասփիւռէն հետեւիլ ողիմպիական խաղերուն: Թէեւ վեց տարեկան էր, լաւ խօսիլ չէր գիտեր, բայց աշխարհի զանազան երկիրներու դրօշները լաւ կը ճանչնար: Օր մը հարց տուաւ ան. «Մամա, ինչո՞ւ Հայաստանը դրօշակ չունի...»: Տարիներ ետք, երբ Հայաստանը անկախութիւն ստացաւ, կարծես իր մէջ արթնացան փոքր տարիքէն իրեն ջամբուած հայրենասիրութեան եւ ազգասիրութեան զգացումները. «Մամա, ինչո՞ւ Հայաստանի դրօշակը միայն ճատրակի եւ ծանրաբարձութեան սրահները կը տեսնենք, ուրիշ մարզախաղերու մէջ՝ ոչ, ամօթ չէ՞ հայերուն»:



Եւ ահա Յովիկը իր հարցումին տուաւ պատասխան, երբ ան մասնակցեցաւ Սեւանայ լիճի ափին կազմակերպուած հաշմանդամներու յատուկ ողիմպիական լողի մրցումներուն: Մասնակիցները 9 տարեբեր երկիրներէ 186 հաշմանդամներ էին: Յովիկը միակ հայն էր, որ կը ներկայացը-

նէր Հայաստանը: Ան բնիկ հայէպցի է եւ 9 տարի է ընտանիքով փոխադրուած է Հայաստան:

Յովիկը շատ մեծ զարմանք յառաջացուց բոլորին, երբ իր հաշմանդամութեան աստիճանի սահմաններուն մէջ (որ համաշխարհային բժշկական չափանիշով կը բաժնուի 15 մակարդակի) մրցանիշ հաստատեց 50 մեթր կուրճքի լողի մէջ եւ ձեռք բերաւ ոսկի մետալ:

Հայաստանի պատմութեան մէջ Յովիկը եղաւ առաջին ոսկի մետալ շահող հաշմանդամը լողի ասպարէզին մէջ:

Յովիկը Հայաստանի պատկերասփիւռի զանազան կայաններէն հարցազրոյցներ ունեցաւ իր իրազործումին մասին եւ պատասխանը եղաւ նոյնը. «Այս յաղթանակը միայն իմա չէ, ողջ հայութեանն է: Այսօր անով չեմ բաւարարուելու, Աստուած ինձ ինչքան ուժ տայ, հայոց դրօշը բարձր պիտի պահեմ աշխարհի բոլոր լողաւազաններու սրահներուն մէջ»:

Յովիկը յաղթանակի հասնելու համար 11 ամիս շարունակ մարզուեցաւ մարզիչ Արա Գալստեանի հետ, որ ոչ մէկ ճիգ ինայեց Յովիկին արդիւնքները բարելաւելու համար:

Այս անգամ Յովիկը երկու նպատակ ունէր՝ մետալ ձեռք բերել, յետոյ նուիրել զայն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին:

Օր մը հեռաձայնով կը խօսէր իր շատ մտերիմ ընկերոջը՝ Ֆուլթպոլի մարզիչ Բաբգէն Մելիքեանին հետ. «Բաբգէն ջան, մենք՝ մարզիկներս, պէտք է Հայաստանի պատիւը բարձր պահենք, Եւրոպայի մեր պարծանքն է, չի բաւեր թուրքերը ինչէր բերեցին հայ ժողովրդի գլխին. ժամանակն է որ ամբողջ աշխարհը իմանայ Հայաստանի մասին: Պատկերացրու հայրս մի անգամ ինձ ասեց. «Տղաս, Արմէնիա ո՞ւր է, չեն գիտեր, Ալպանիա են կարծում: Ես Աստուծոյ շատ եմ հաւատում, Բաբգէն ջան, իրանից խնդրում եմ ինձ ուժ ու կարողութիւն տայ, որ կարողանամ մի բան անել»:

Ի վերջոյ, հասաւ պահը եւ մենք Յովիկին հետ մեկնեցանք

Անտվերպ (Պելճիքա), այս անգամ «Հայաստանի հաշմանդամներու փարաօլիմպիական կազմակերպութեան» անուան տակ:

Ճաշասենեակը մեր սեղանակիցները Փրանսացի հաշմանդամներ էին: Յովիկը շատ ուրախացաւ, որ Փրանսացիները հայոց պատմութեան տեղեակ էին:

Եւ ահա, մրցումին օրը:

Երբ լողաւազան մտանք, 15 տարբեր երկիրներու դրօշները կախուած էին բնականաբար այբուբենական շարքով: «Արմենիա»-ի դրօշը առաջինն էր. յուզումէս աչքերս արցունքով լեցուեցան, երկուքս իրարու նայեցանք՝ առանց մեր աչքերը ակնթարթելու: «Մամա, - ըսաւ Յովիկը, -ես շատ հպարտ եմ, որ իմ շնորհիւս այդ դրօշը կախուած է այնտեղ, մի՛ վախնար, ես քեզի բերած եմ այստեղ, որ իմ յաղթանակ տեսնես, այդ իմ վիզին պարտքն է, ես բոլորին խոստացել եմ՝ Հալէպի Գերաշնորհ Սրբազան Հօր՝ Շահան Սարգիսեանին, նախագահի եղբօր՝ Լեւոն Սարգսեանին, Ամօ Գաբրիէլին: Ճշտտի Ուաննէսը (նկատի ունի մեծ հայրը) ինձ կէս ճամբան չձգեց, պիտի շարունակեմ, աղօթէ ինձ համար»:

Երբ բարձրախօսէն Յովհաննէս Շիրազ Կոստանեան «Արմէնիա» հնչեց, չեմ կրնար բացատրել, թէ ինձի ինչէ՛ր կատարուեցան, գրիչով չեն բացատրուիր, եւ Յովիկը 300 հաշմանդամ լուղորդներու մէջ, ճակատը բարձր, ձեռք բերաւ 100 մեթր կուրծքի լողի առաջին տեղը:

Իսկ երկու ժամ ետք, 100 մեթր մէջքի լողի մրցումին հանդիսացաւ չորրորդը:

Յաջորդ օր ան իրաւունք ստացաւ միջազգային եւ համաշխարհային մրցաշարքերու մասնակցելու, ինչ որ շատ կարելոր է ապագայի համար:

Յաղթական վերադարձանք Հայաստան, ուր մեր ամէնէն մտերիմ ու սիրելի ազգականը, որ Յովիկին Հայաստան եղած ժամանակ երեք տարի շարունակ անոր նեցուկ կանգնած է՝ Գաբրիէլ Չէմպէրճեանը անակնկալ մը պատրաստած էր, Հայաստանի պատկերասփիւռի ՀՂ-ի մարզական կազմը հրաւիրելով օղակայան: Իսկ Յովիկին եղբայրը՝ Արարատ Կոստանեանը, Հայաստանի դրօշը ձեռքը, անհամբեր կը սպասէր Յովիկին: Երբ Յովիկը ներս մտաւ, դրօշը փաթթեց եղբօրը վիզին՝ «վարձքդ կատար» ըսելով:

Խօսնակ Կարէն Կիլոյեանի այն հարցումին, թէ «Ի՞նչ է զգացումդ», Յովիկը պատասխանեց. «Հպարտ եմ ու շատ յուզուած, ուրախ եմ որ ուղեգիր ձեռք բերած եմ, որ իմ նման երեխաները իմ ճամբով շարունակեն»:

Յովիկը իր յաղթանակները նուաճեց միայն ձեռքերը շարժելով, իսկ վերջին 10 օրերուն սկսաւ նաեւ ոտքերը շարժել:

Կեանքը լեցուն է անակնկալներով:

Հիմա Յովիկը Հայաստանի հաշմանդամներու օրինակելի տիպարն է: 13 հաշմանդամ երեխաներ կ'ուզեն իրեն հասնիլ:

Յաջողութիւն իրեն:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



Հ.Մ.Ը.Մ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ, ՇՈՒԷՏԻ ԵՒ ԱՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Թղթակից ՓԱՐԻԶ



ՍԵՄԻՆԱՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ

Սեմինարին առաջին օրը կատարուեցաւ սկաուտական բանակումներու ծանօթացում: Բանակումներու տեսակներու մասին տրուեցան տեղեկութիւններ: Ապա, փոխանցուեցաւ թէ ի՞նչպէս բանակում կը կազմակերպեն, ի՞նչ է կազմակերպելու եղանակը, ո՞վ է կազմակերպողը, քանի՞ տեսակ կ'ըլլայ, ե՞րբ կ'ըլլայ, ի՞նչ գոյքեր ապահովել բանակումի մը համար, արտօնութիւն ի՞նչպէս առնել իւրաքանչիւր երկրի սահմանած արտօնութիւններու ծիրին մէջ, բանակումներու դասաւորումներ, ներքին օրէնքներ եւ կանոններ եւ այլն: Խօսուեցաւ նաեւ, որ իւրաքանչիւր բանակումէ ետք ի՞նչպէս կազմակերպել խարուկահանդէս, ե՞րբ կարելի է ընել խարուկահանդէս, ուրկէ՞ եկած է անոր զաղափարը, ո՞վ է վարողը եւ ի՞նչ յայտագիրներ կ'ընդգրկէ ան: Նիւթին աւարտին առիթ տրուեցաւ որ եղբայրներն ու քոյրերը իրենց տեսակէտները յայտնեն բանակումներու, խարուկահանդէսներու եւ յայտագիրներու մասին:



ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐՈՒ ԱՐԾԱՐԾՈՒՄ

Սեմինարին երկրորդ օրը յատկացուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագրի փոխանցման: Մասնակիցներուն բացատրուեցաւ, թէ ի՞նչ մասերէ կը բաղկանայ ծրագիր-կանոնագիրը, ո՞վ կը մեկնաբանէ զայն, ի՞նչ կը թելադրեն անոր ոգին եւ տառը եւ այլն: Թելադրուեցաւ նաեւ անպայման ունենալ ծրագիր-կանոնագիրէն օրինակ մը՝ ուսումնասիրելու եւ սերտելու համար զայն:

Ընդհանուր ներկայացումէ ետք, առիթ տրուեցաւ, որ երեք շրջաններու մասնակիցները խօսին իրենց մասնաճիւղերու սկաուտական աշխատանքներուն մասին եւ կատարեն փորձառութիւններու փոխանակում:

Յաջորդեցին սկաուտական շարք մը այլ նիւթեր.-
 -Ի՞նչպէս խումբ մը մէջտեղ բերել, վարել ու պահել:
 -Խմբապետին դերը, պարտականութիւններն ու պարտաւորութիւնները:

-Խմբակային դրութիւն: Խմբակներու աշխատանքներ եւ անոնց ազդեցութիւնը խումբի մը գործունէութեան վրայ:

-Ի՞նչպէս արժեւորել սկաուտ մը եւ հետապնդել անոր աշխատանքը:



-Աստիճանաւորական կազմի մը կարեւորութիւնը, պարտաւորութիւններն ու պարտականութիւնները:

-Ի՞նչպէս յայտագիր պատրաստել: Ի՞նչ նկատի առնել: Քանի՞ մասի բաժնել, ո՞ւր գործադրել եւ ի՞նչպէս:

-Հ.Մ.Լ.Մ-ի սկստական կառուցը, պաշտօններու եւ աստիճաններու տարբերութիւնը:

-Ակնարկ սկստական կարգերու (կակուղ թաթիկ, միաստղ, երկաստղ, նորագիր, նորընծայ, Բ. կարգ, Ա. կարգ):

Օրուան յայտագրին աւարտին, սեմինարի մասնակիցներուն բաժնուեցաւ թղթիկ մը, ուր յիշուած է սկստական խումբի մը Առաջնորդին հետ պատահած դէպք մը, որուն մէջ Վարիչ Առաջնորդը եւ Խմբապետը թերացում արձանագրած են: Յայտագրներու կրկնութիւն տեղի կ'ունենայ եւ թիւի նուագում կ'արձանագրուի: Ներկաները դէպքը լաւ մը սերտելէ ետք մատնանշեցին սխալ կէտերը, անդրադարձան թերացող կողմերուն եւ առաջարկներ ներկայացուցին նման դէպքեր չկրկնուելու համար:

ԵՐՐՈՐԴ ՕՐՈՒԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ ԵՐԿՈՒ ՀԱՆԳՐՈՒԱՆՈՎ

Սեմինարին երրորդ օրը, Կիրակի, 8 Յունիսին, աշխատանքները կատարուեցան երկու հանգրուանով:

Առաջին հանգրուանը տեղի ունեցաւ ժամը 11.30էն կէսօրէ ետք ժամը 3, Միխիթարեան վանքի շրջափակին մէջ: Սեմինարին մասնակիցները ներկայ գտնուեցան Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի սկստական պաշտօնական հաւաքին, դրօշակի արարողութեան, որմէ ետք անցան յայտագրի գործադրութեան: Բացօթեայ վայրը օգտագործելով՝ տեղի ունեցաւ կարգապահական հրահանգներու գործադրութիւն, դրօշակի արարողութիւն, դրօշակ պահելու եւ փոխանցելու ձեւերու ծանօթացում: Հաւաքոյթին աւարտին, խօսք առաւ Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի խմբապետ եղբ. Պօղոս Մահպուկեան: Ան խօսեցաւ դաստիարակչական սեմինարին յաջողութեան մասին եւ խօսքը փոխանցեց քոյր Սեղա Պէշլեանին, որ իր կարգին անդրադարձաւ սեմինարին կարեւորութեան եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Ճաշի դադարէն ետք, վերջին բաժինով, սեմինարին մասնակիցներուն փոխանցուեցան հետեւեալները:-

-Ի՞նչպէս ծրագրի մը թղթածրարը եւ տեղեկագիրը պատրաստել, ի՞նչ կէտեր նկատի առնել: Ո՞վ պէտք է վաւերացնէ թղթածրարը: Այս առիթով բաժնուեցան թղթիկներ, ուր եղբայրներն ու քոյրերը պատրաստեցին Բ. կարգի դասընթացքի մը թղթածրարը:

-Դիւանական աշխատանքներ, քարտուղարական նօթերու արձանագրութիւն, ատենագրութիւն գրելու եւ վաւերացնելու ձեւեր:

Եւօրեայ սեմինարին աւարտին, իւրաքանչիւր մասնակից արժեւորում մը կատարեց եւ քննարկեց երեք օրուան ընթացքին փոխանցուած նիւթերը: Ի՞նչ կը սպասէր եւ ի՞նչ գտաւ: Այնուհետեւ, բոլոր մեկնեցան այն համոզումով, որ սկստութիւնը առաքելութիւն է, համոզում է, կամաւոր աշխատանք է, եւ թէ՛ սկստութիւնը իր գիտելիքները միշտ պիտի պահէ, քայլ պահելով օրուան նորութիւններուն եւ յաւաքդիմութիւններուն հետ, նկատի առնելով իւրաքանչիւր սկստութիւն առաջարկը եւ կարծիքը: Հետեւաբար, սկստական յայտագրները հարկ է միշտ ընդգրկեն նորութիւններ: Դժուարութիւններու դիմաց պէտք չէ տկարանալ, իւրաքանչիւր աշխատանք պէտք է գրի առնել, արձանագրել եւ արխիւ պահել, չմոռնալ սկստութիւն տարազը, յարգանքը, նպատակը եւ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»:

Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի վարչութեան անդամ եղբ. Անտրէ Մարգարեան խօսք առնելով յայտնեց, որ սեմինարին ընթացքին փոխանցուած գիտելիքները պէտք է իրենց թարգմանութիւնը գտնեն գետնի վրայ, մասնակիցները իրենց ստացած գիտելիքները պէտք է փոխանցեն շրջաններուն, միշտ փնտռելով որակը սկստութեան մէջ եւ ոչ՝ քանակը: Պէտք է տալ՝ առանց փոխարէնը սպասելու:

Եղբայր Մարգարեան շնորհակալութիւն յայտնեց մասնակիցներուն եւ Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան՝ սեմինարին իրականացման համար:

Հուսկ, դաստիարակչական սեմինարը վերջ գտաւ «Յաւաջ նահատակ» քայլերգով:



ՎՐԻՊԱԿ
«Մարզիկ»ի նախորդ երկու թիւերու թղթածրարին աղբիւրը վրիպակով մը տեղ չէր գտած նիւթերու աւարտին: Ողիմպիականներու ճուրղուած «Մարզիկ»ի զոյգ նիւթերը քաղուած էին Աւետիս Պայրամեանի «Մարզաշխարհի անուանի հայերը» գիրքէն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ...ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՔԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

**Թղթակից
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵԱ**

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՀԱՆԴԻՍԱՌՈՐ ԲԱՅՈՒՄԸ

Համագումարին հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 27 Յունիսի երեկոյեան, «Արմենիա» կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.-ականներու, հիւրերու, քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ մասնակից խմբապետ-խմբապետուհիներու:

Այս առիթով հայերէն եւ սպաներէն խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկառտ. Խորհուրդի անդամներ՝ քոյրեր Սեսիլիա Տաղլեան եւ Սիլվիա Աշճեան, քոյր Իրմա Ճէրէճեան, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Տանիէլ Ճիւպէլեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեան: Անոնք ընդգծեցին համագու-

մարին նպատակը եւ շեշտեցին նման նախաձեռնութիւններու կարեւորութիւնը՝ սերունդներու առողջ դաստիարակութեան համար: Ողջոյնի խօսք արտասանեց Արժանթինի եւ Զիլիի Հայոց Առաջնորդ Գիսակ Արք. Մուրատեան:

Ապա, ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արժանթինի անցեալի եւ ներկայի սկառտական աշխատանքները ներկայացնող տեսերիզմը: Յաջորդեց հիւրասիրութիւն:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԸՆԹԱՑԻԸ

Պաշտօնական բացումէն ետք, համագումարը իր գործնական աշխատանքներուն սկսաւ Շաբաթ, 28 Յունիսի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի դաշտին մէջ, «Ով հայ արի» քայլերգով: Փոխանցուեցան հետեւեալ նիւթերը.-

-Հ.Մ.Ը.Մ.ի նպատակ եւ պատկանելիութիւն:

-Սկառտութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի



սկառտութեան նպատակ:
-Սկառտական խումբերու կազմակերպում ըստ տարիքի եւ ճիւղի:
-Սկառտական գիրքերու ներկայացում:

-Ինչո՞ւ եւ ի՞նչպէս ծրագրել:
-Ի՞նչ կրնայ պարունակել սկառտական ծրագիր մը մէկ տարուան ընթացքին (սկառտական, ազգային, մշակութային, կրօնական եւ այլն):

-Խմբակային աշխատանք:
Նիւթերու փոխանցման կողքին, իւրաքանչիւր խմբակ, ըստ իր ճիւղին, պատրաստեց միամսեայ եւ միօրեայ յայտագիրներ եւ զանոնք փոխանցեց ներկաներուն: Յայտագիրները արժանացան լայն քննարկման:

Խմբապետներու յատուկ խմբակ մը սերտեց Վկայեալ կարգի պայմանները եւ իր առաջարկները ներկայացուց այդ ուղղութեամբ:

Նիւթերու փոխանցումը կատարուեցաւ դասախօսութիւններով, զրոյցներով, խմբակային աշխատանքներով եւ խաղերով:





Երեկոյեան, ընթրիքէն ետք, անը- պաստ օդին պատճառով կարելի չեղաւ խարոյկ վառել, փոխարէնը տեղի ունեցաւ հայկական երգերու քարտեք :

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՆԳՐՈՒԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Կիրակի, 29 Յունիսին, շարունակ- ւեցան համագումարին աշխատանքները եւ երկրորդ հանգրուանով ներկայաց- ուեցան հետեւեալ նիւթերը.-

-Խմբապետական կազմեր, անոնց աստիճանաւորական կառոյցը, պար- տականութիւններ, պարտաւորութիւն- ներ, ժողովներ:

-Խմբակային աշխատանք: Ներկաները բաժնուեցան երեք խում- քի եւ քննեցին հետեւեալ նիւթերը.-

Ա-Արարատեան կարգի պայմաններ: Բ-Մոկլիներու ծրագիրներ:

Գ-Սկաուտական սովորական յայ- տագիրներէ դուրս պատանին ներգրա- ւող աշխատանքներ:

Իւրաքանչիւր նիւթի շուրջ խումբեր փոխանցեցին իրենց տեսակէտներն ու առաջարկները:

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, խումբերը քննեցին նաեւ երկու այլ կէտ.-

-Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումի առաջարկներ:

-Ի՞նչպէս դէմ դնել օտարամոլու- թեան:

Սեմինարին ակարտին երկար խօս- ւեցաւ սկաուտութեան դերին եւ օտա-

րամոլութեան դէմ պայքարի ձեւերուն մասին: Շեշտուեցաւ հայապահպանման աշխատանքներու կարեւորութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը այդ աշխա- տանքներուն մէջ: Բոլորին մօտ զգալի էր ձուլման վտանգը եւ ամէն զնով անոր դէմ դնելու վճռակամութիւնը:

Մասնակիցները գոհունակութեամբ արտայայտուեցան համագումարին աշ- խատանքներուն մասին եւ խոստացան լաւագոյն ձեւով ծառայել Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր ճամբով իրենց ժողովուրդին ու հայրենիքին:

Փակման, խօսքեր արտասանեցին Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչու- թիւնը եւ Շրջանային Վարչութիւնը: Տե- ղի ունեցաւ հաստատագիրներու բաշ- խում: Համագումարին մասնակից խմբապետներն ու Պուէնոս Այրէսի մասնաճիւղը քոյր Իրմա Ճէրէճեանին յանձնեցին յատուկ յուշանուէրներ:

Հուսկ, համագումարը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ «Ցտեսութիւն» երգով:

ԳՈՐՏՈՊԱ ԵՒ ՈՒՐՈՒԿՈՒՅՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Համագումարին յաջորդող օրերուն, 1-5 Յուլիս 2008ին, քոյր Իրմա Ճէրէճե- ան այցելեց Գորտոպայի եւ Ուրուկ- ուէյի մասնաճիւղեր: Քոյրը ներկայ գտնուեցաւ սկաուտական պաշտօնա- կան արարողութիւններու եւ տեսակ- ցութիւններ ունեցաւ տեղւոյն վարչու- թիւններու եւ խմբապետական կազմե-

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Վիքթորիա Սործիկեան, Ալեխանտրօ Խաչատուրեան, Մարիանա Ոսկերիչեան, Լորդ- թա Պալեան, Մելինա Այվազ- եան, Սիլվանա Սաաթճեան, Սթէֆանի Գոսթանեան, Մ. Էմիլիա Ճուպլեան, Արեւ Գնեագեան, Նիքոլաս Նաք- քաշեան, Գարինա Միսիրլեան, Փապլօ Պալեան, Ակսէլ Ման- թալեան, Նիքոլաս Տէկիրմէն- ճի, Կուսթաւօ Խաչատուրեան, Կասթոն Միսիրլեան, Գարօլի- նա Խաչատուրեան, Վերգինէ Մարտիկեան, Էլիանա Փանոս- եան, Ատրինէ Տէրտէրեան, Կասթոն Յովհաննէսեան, Արիս Սամանճեան, Սոֆիա Սաֆար- եան, Պէթիանա Գոլ, Ֆարիտ Ճիճի, Արամ Բարաքեան, Ռո- մինա Յովհաննէսեան, Լուքաս Արսլանեան, Նաթալի Տէրտէր- եան, Սեսիլիա Սիմոնեան, Ակուսթին Անալեան, Գայիանէ Վարդապետեան եւ Արամ Պա- սաքեան:

րու հետ: Տեսակցութիւնները առիթ մը եղան իրագործուած համագումարին մասին տեղեկութիւններ փոխանցելու եւ սկաուտական թէ ազգային մտահո- գութիւններու շուրջ խորհրդակցելու:

ՔԱՐՈՉՁՁԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Խմբապետական համագումարին ընթացքին, շրջանի պատասխանատու կազմեր այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի դաշտ եւ քաջալերեցին ներկա- ները: Այս առիթով, Պուէնոս Այրէսի մէջ լոյս տեսնող «Արմենիա» թերթը լոյս ընծայեց լայն տեղեկատուութիւն: Իր կարգին, քոյր Իրմա Ճէրէճեան հար- ցազրոյցներ ունեցաւ «Արարատ» եւ «Կոմիտաս» ձայնասփիւռի կայաննե- րուն եւ «Արմենիա» թերթին հետ, անհը- րաժեշտ տեղեկութիւններ տալով իր առաքելութեան եւ համագումարի աշ- խատանքներուն մասին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՅՅՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ԱԹԵՆՔ

Կիրակի, 22 Յունիսին, Աթէնքի Ֆիքսի ակումբի «Աւետիքեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի ՅՅրդ Ներկայացուցչական Ժողովը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Միհրան Շիմչիրեանի ներկայութեամբ:

Ժողովին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը եւ Աթէնքի ու Գոքինիոյ մասնաճիւղերէն պատգամաւորներ: Ներկայ էին նաեւ Սկաուտական Խորհուրդի կազմը եւ սկաուտ խմբապետներ: Ժողովին ներկայ գտնուեցաւ Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հայկ Չիչէքեան, «պատուոյ նախագահ» եղբ. Կարպիս Գուլյումճեան եւ «Ազատ Օր» օրաթերթի ներկայացուցիչը:

Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան ՅՅրդ Ներկայացուցչական Ժողովին բացումը յայտարարեց եւ խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Միհրան Շիմչիրեանին: Եղբայրը յայտնեց, որ Յունաստանի կազմին մօտ գտնուելով իր մտածումը տասը տարիներ ետ կ'երթայ եւ կը մտաբերէ այն պայմանները, երբ ինք ներկայ գտնուած է Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի խանդավառ գործունէութեամբ բեղուն

ժողովներու:

Եղբայր Շիմչիրեան գնահատեց նախորդ տարեշրջաններու ընթացքին կատարուած իրագործումները, յիշելով թէ Յունաստանի մէջ էր, երբ համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին բանակումը կը կազմակերպուէր, համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերը ու մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ժողովները տեղի կ'ունենային, որոնք միշտ առիթը կու տային աւելի բարձրացնելու միութեան աշխատանքներու ծաւալը ու արդիւնաբերութիւնը: Եղբայրը շեշտեց զոհաբերութեան ոգիի անհրաժեշտութիւնը մեր բոլոր գործերուն մէջ:

Այնուհետեւ, ժողովին իր խօսքը ուղղեց Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հայկ Չիչէքեան, նշելով որ գործող բոլոր ուղեկից միութիւնները ամուր սիւները կը կազմեն գաղութին եւ իրենց աշխատանքներով ու յաջողութիւններով կը սատարեն ազգային կառույցներու յարատեւման: Դիմագրաւուած դժուարութիւններով հանդերձ, պէտք է կազմակերպուիլ ու լաւատես մօտեցումներով յառաջանալ, ըսաւ Չիչէքեան:

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի «պատուոյ նախագահ» եղբ. Կարպիս Գուլյումճեան: Ան ողջունեց ՅՅրդ Ներկայացուցչական Ժողովին գումարումը եւ շեշտեց նման ժողովներու նպատակը՝ անդրադառնալ կատարուած աշխատանքներուն, քննութեան ենթարկել միութեան այժմէական պահանջները, ստուգել ճիշդն ու թերին, ու ապա եղբայրական անկեղծ մօտեցումով գնահատել, քննադատել եւ ապա ծրագրել ապագայի գործունէութիւնը: Ժողովը ընտրեց առժամեայ իր դիւանը՝ նախագահ՝ եղբ. Պաղտիկ Գարապաճաքեան, քարտուղար եղբ. Գարլօ Գուլյումճեան: Դիւանի առաջարկով մէկ վայրկեան յոտնկայս լուծութեամբ յարգուեցաւ յիշատակը յաւէտ մեկնած Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներուն եւ քոյրերուն:

Ապա ընտրուեցաւ ժողովի մնայուն դիւանը, նախագահութեամբ եղբ. Պաղտիկ Գարապաճաքեանի եւ քոյր Արշա Սամուէլեանի: Լիազօրագրերու ստուգումէն ի յայտ դարձաւ, որ ժողովին իրաւասու ձայները 16 էին:

Տեղի ունեցաւ յանձնախումբերու կազմութիւն: Բանաձեւի յանձնախումբ ընտրուեցան քոյր Գոհար Ալիանաքեան, եղբայրներ Յարութիւն Մանուկեան եւ Թագլոր Յովակիմեան: Հաշուեքննիչ յանձնախումբ ընտրուեցան եղբայրներ Թորոս Մաուրեան, Գրիգոր Ճանիկեան եւ Յովիկ Տէր Յովակիմեան: Արխիւային յանձնախումբ ընտրուեցան եղբայրներ





Սերգո Եղիմեան եւ Գարլօ Գուլյումճեան:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան տեղեկագիրէն ի յայտ եկաւ, որ անցնող երկամեակին վարչութիւնը գործած է հնգամդամ կազմով: Ատենապետ եղբ. Պօղոս Չորաքեան, փոխ ատենապետ եղբ. Կարպիս Ճանիկեան, ատենադպրուհի քոյր Վերոնիկ Քիւրէքճեան, գանձապահ եղբ. Արա Պատէլեան, խորհրդական եղբ. Վահան Քէօսէեան: Տարեշրջանին ընթացքին, քոյր Վերոնիկ Քիւրէքճեանի հրաժարումէն ետք, ատենադպրուհի պաշտօնը ստանձնած է քոյր Վերգին Բալուեան, իսկ Շրջանային Վարչութեան կազմը զօրացնելու նպատակով ներառնուած են քոյր Ակնէս Սրապեան (որ ստանձնած է գանձապահութեան պաշտօնը) եւ եղբ. Յովհաննէս Մանկոյեան (խորհրդական):

Վարչութիւնը իր ներկայացուցիչները նշանակած է տեղական մասնաճիւղերուն եւ Սկառուտ. Խորհուրդին մօտ: Դիւանական իր պարտաւորութիւնները կատարած է ատենադրութիւններու եւ նամակագրութեան ճամբով: Գաղութի բոլոր միութիւններուն հետ յարաբերական իր կապերը պահած է, ինչպէս նաեւ մասնակցութիւն բերած է գաղութային հիմնական ձեռնարկներուն:

Շրջանային Վարչութիւնը կազմակերպած է Ամանորի գաթայի ձեռնարկներ, կազմակերպած է Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի 85ամեակը եւ հայ սկառուտութեան 95ամեակը նշող ձեռնարկ մը, յաջողութեամբ է Ֆիքսի ակումբի մարզադաշտին ամբողջական նորոգումը՝ Աթէնքի քաղաքապետութեան ծախսերով:

2007ի Սեպտեմբերին, շրջանը իր մասնակցութիւնն բերած է Հ.Մ.Ը.Մ-ի 8րդ Պատգամաւորական Ժողովին, երկու պատգամաւորով:

Այժմ, Աթէնքի եւ Գոքինիոյ իր մասնաճիւղերուն միջոցով

շրջանը կը պահէ ֆուլթայոլի փոքրերու եւ երէցներու, պասքեթպոլի փոքրերու եւ երէցներու, վոլիպոլի երէցներու եւ փոքրերու, ինչպէս նաեւ ճատրակի եւ լողի խումբեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

2007ին, շրջանը իր մասնակցութիւնը բերած է համահայկական չորրորդ խաղերուն, Աթէնքէն 25 եւ Սելանիկէն 11 մարզիկներով:

2008ի Ապրիլին, պասքեթպոլի տղոց խումբը դարձած է յաղթական՝ Փարիզի մէջ կազմակերպուած «Սուրէն Մուրատեան» մարզական մրցաշարքին:

2007ին, համահայկական մրցումներու մասնակցութեան առիթով, շրջանը չորս օրով հիւրընկալած է Արժանիիի բազմամդամ պատուիրակութիւնը:

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ

Շրջանային Վարչութեան կողքին գործած է Շրջանային Սկառուտ. Խորհուրդը իր մասնաճիւղերով, ուր կը համախմբուին 200 անդամներ՝ սկառուտ-արեւոյշներ, գայլիկ-արծուիկներ, երէց-պարմանուհիներ: Իրենց կողքին կը գործեն ծնողական խորհուրդներ, որոնք կը հոգան մասնաճիւղերու սկառուտական խումբերուն կարիքները:

Անցնող երկամեակին զարկ տրուած է դաստիարակչական աշխատանքին, հերթական ժողովներու ընթացքին դասախօսութիւններով, գիտելիքներու շուրջ քննութիւններով, դպրոց-սեմինարներով եւ աստիճանաւորներու արշաւ-սեմինարներով: Նիւթերը ընդգրկած են ազգային, կրօնական եւ բժշկական թեմաներ: Տարեշրջանի ընթացքին կազմակերպուած են աստիճանաւորական երկու դպրոց-բանակումներ, որոնց ընթացքին տեղի ունեցած է խմբապետներու եւ փոխ խմբապետներու գիտելիքներու փոխանցում եւ նախապատրաստութիւն:

2006ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին շրջանը բերած է իր կարեւոր մասնակցութիւնը: Այս ամառ տարեկան բանակում կը նախատեսուի Այ Անտրէայի բանակավայրին մէջ, 70 սկառուտներու մասնակցութեամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ-ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ժողովը շարունակեց իր աշխատանքները, լսելէ ետք արխիւային եւ հաշուեքննիչ յանձնախումբերու զեկուցումները, ապա անցաւ օրակարգի քննարկման եւ բանաձեւուած որոշումներու ընթերցման, որոնք ընդգրկեցին կազմակերպչական-վարչական, քարոզչական, յարաբերական-դաստիարակչական, սկառուտական, մարզական, տնտեսական, համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներու կապուած կէտեր:

Աւարտին տեղի ունեցաւ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն: Ընտրուեցան եղբայրներ Կարպիս Ճանիկեան, Պաղտիկ Գարապաճաքեան, Յարութիւն Մանուկեան, Յարութիւն Կիւլթէնեան եւ Արա Պատէլեան:

Ժողովը փակուեցաւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին արգիւնաւէտ նստաշրջանի մաղթանքով:

ԿԱՐԳ ՄԸ ԹԻԲԵՐ ԵՒ ՏՈՒԵԱՆԵՐ

●Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի շրջանի սկառուտական շարքերը կը հաշուեն 195 անդամ, հետեւեալ բաժանումով.-

- Աթէնք՝ 76 տարազաւոր, 7 Սկառուտ. Խորհուրդ:
- Գոքինիա՝ 95 տարազաւոր, 8 Սկառուտ. Խորհուրդ:
- Շրջանային Սկառուտ. Խորհուրդ՝ 5 տարազաւոր, 4 ոչ-տարազաւոր:

●Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ բանակումին, 2006ի ամրան, շրջանը իր մասնակցութիւնը կը բերէ 19 հոգինոց պատուիրակութեամբ:

●Համահայկական չորրորդ մարզախաղերուն, 2007ի ամրան, շրջանը կը մասնակցի պասքեթպոլի տղոց խումբով: Պատուիրակութիւնը կը բաղկանայ 25 անդամ:

Նոյն մարզախաղերուն, Սելանիկի մասնաճիւղը կը մասնակցի 11 հոգինոց պատուիրակութեամբ մը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԲՈՒԷՅԹԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԵՂԲ. ՏՈՔԹ. ԺԱՆ ՊԷՊԷՃԵԱՆԸ



Թղթակից ԲՈՒԷՅԹ

1 Յունիս 2008ին Հալեպի մէջ տեղի ունեցաւ մեծաշուք փառատօն-տողանցք, որուն իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղը, Ֆուլթայոլի իր խումբով եւ վարչական ներկայացուցիչներով:

Փառատօն-տողանցքին յաջորդեց յաղթանակի խրախճանք, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեանի, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանի եւ Գէորգ Կարապետեանի, Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներու եւ բազմաթիւ հրաւիրեալներու:

Խրախճանքին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցաւ «Մառայութեան» շքանշանով պարգևատրելու երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ-ի Հալեպի Ֆուլթայոլի խումբին հետ փայլած եղբ. տղթ. ժան Պէպէճեանը:

Եղբ. տղթ. ժան Պէպէճեանի պարգևատրումը կատարուեցաւ եղբ. Կարպիս Գապասագալեանի ձեռամբ: Եղբոր կենսագրականը կարգաց Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղի ատենապետ եղբ. Գէորգ Չաղլասեան: Այս առիթով, եղբ. Գապասագալեան ուժ եւ կորով մաղթեց պարգևատրեալ եղբոր, որ պէսզի նոյն թափով եւ գիտակցութեամբ շարունակէ միութեան իր ծառայութիւնը:

ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ ԵՂԲ. ՏՈՔԹ. ԺԱՆ ՊԷՊԷՃԵԱՆ

Եղբ. տղթ. ժան Պէպէճեան, մասնագիտութեամբ մանկաբոյժ, ծնած է Հալեպ, 1954ին:

12 տարեկանէն ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ին, միանալով կրտսերներու «Շանթ» խումբին:

1969ին, թենիսի կրտսերներու ախոյեանութեան բաժակը կը պատկանի եղբ. ժանին: Փոքր տարիքէն, մարզիկի բացառիկ տուեալներով ան մեծ նուաճումներ ունեցած է փինկ-փոնկի, պասքեթպոլի եւ աթլէթի մէջ, սակայն Ֆուլթայոլի հանդէպ իր ունեցած մեծ սէրը պատճառ եղած է որ հրաժարի միւս խա-

ղերէն եւ զբաղի միայն Ֆուլթայոլի: Նկատի ունենալով Ֆուլթայոլի մէջ իր ունեցած հմտութիւնը, օրուան պատասխանատուները 1969ին իրեն առիթը ընծայած են, որ 15 տարեկանին իր առաջին մրցումը խաղայ Հ.Մ.Ը.Մ-ի փառապանծ այն կազմին հետ, ուր միայն լաւագոյնները կրնային տեղ գրաւել: Պատանի եղբ. ժանը այդ առաջին առիթը օգտագործելու տուեալները ունէր: 1970ին, 16 տարեկանին, եղբ. Կարպիս Թովմասեանի կողքին, ան իր մնայուն տեղը ունեցած է խումբին մէջ:

1972ին ան հրաւիրուած է Սուրիոյ Ֆուլթայոլի ազգային խումբ, Իրանի մէջ ասիական խաղերու մասնակցութեան համար: 1975ին կրկին հրաւիրուած է եղբ. Կարպիս Թովմասեանի հետ, Սուրիոյ ազգային խումբը ներկայացնելու համար, Ալճերիոյ մէջ տեղի ունեցող Միջերկրականեան խաղերուն: Եղբ. ժան Պէպէճեան Հալեպի մարզական ասպարէզին մէջ արձանագրած է հետեւեալ նուաճումները:-

1. Մէկ անգամ Հալեպի կրտսերներու ախոյեան:
 2. Քառէն Եփփէ ձեմարանի միջնակարգի Ֆուլթայոլի խումբին հետ Հալեպի միջնակարգ վարժարաններու ախոյեան (միակ անգամը 1969), իսկ Հալեպի երկրորդական վարժարաններու երկրորդ դիրքը գրաւած է 1971ին:
 3. Իր մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլի ներկայացուցչական խումբը գրաւած է Սուրիոյ Ա. դասակարգի խաղերուն երրորդ, չորրորդ եւ հինգերորդ դիրքերը:
- Եղբ. տղթ. ժան Պէպէճեան եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղի վարչութեան առաջին ատենապետը: Տարիներ շարունակ ան եղած է մասնաճիւղի ընդհանուր ժողովներու նախագահութեան կազմերուն մէջ:
- Եղբ. ժան յաճախ մաս կազմած է Մայիսեան փառատօններու եւ դաշտահանդէսներու կազմակերպիչ մարմիններուն: Ազգային, գաղափարական, ընկերային եւ բժշկական իր դասախօսութիւններով ան իր կարեւոր բաժինը ունեցած է հասակ նետող յաջորդական սերունդներու դաստիարակութեան մէջ:



ԵՂԲ. ԱՊԷՐ ՈՒՆՃԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ -2008»Ի ՏԻՏՂՈՍԻՆ

Մարտ Բեյրութ
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ



Հ.Մ.Ը.Մ. Մ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը 2008ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը շնորհեց Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն եղբ. Ալպէր Ունճեանին, առ ի գնահատանք՝ երկար տարիներու համեստ ծառայութեան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն:

Այս ուրախ առիթով հանդիպում մը ունեցանք եղբոր հետ, մօտէն ծանօթանալու անոր կենսագրական դիժեբունք եւ Հ.Մ.Ը.Մ.ականի տիպարին:

Եղբ. Ունճեան ծնած է Պուրճ Համուտ, Լիբանան: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Հայֆա, Պաղեստին: 1935ին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի մասնաճիւղին իբրեւ գայլիկ, ապա անցած է սկաուտական շարքեր, ուր հետեւողական եւ բժախնդիր աշխատանքին շնորհիւ հասած է մինչեւ Վարիչ Առաջնորդի աստիճանին: Ֆուլթայլի հանդէպ յատուկ սէր ունենալով, սկաուտականին աւելցրեց ան մաս կազմած է մասնաճիւղի ֆուլթայլի Բ. խումբին եւ մասնակցած է արաբական ֆետերասիոնի ֆուլթայլի մրցաշարքերուն: 1946 եւ 1947 թուականներուն, յաջորդական երկու տարիներ, եղբայրը մասնակցած է Պաղեստինի ֆուլթայլի Բ. դասակարգին ախոյեան



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Յովիկ Պետելեան եղբ. Ալպէր Ունճեանը կը պարգևատրուի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական 2008»ի յուշանուէրով:

նութեան մրցումներուն:

1948ին, արաբ-իսրայէլեան պատերազմի հետեւանքով, եղբ. Ունճեան ընտանիքին հետ վերադարձած է ծննդավայր եւ նոյն տարին իսկ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին եւ նոյն պատճառներով Պաղեստինէն Լիբանան փոխադրուած կարգ մը երիտասարդներու հետ կազմած է մասնաճիւղի ֆուլթայլի Բ. դասակարգի «Կամբ» խումբը: Նոյն տարին իսկ մասնակցելով Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի երկրորդական խումբերու մրցաշարքին, արժանացած են Բ. մրցանակին:

Եղբոր միութենական կազմակերպչական արժանիքները ակնյայտ դառնալով, 1949ին ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի վարչութեան անդամ եւ այնուհետեւ մինչեւ 1976 քանի մը կարճ դադարներով միայն կը կատարէ

տարէ վարչականի իր պարտականութիւնները՝ ստանձնելով գանձապահի, մարզական, փոխ ատենապետի եւ ատենապետի պաշտօնները: Իր աշխատանքին ընթացքին, եղբայրը զարկ կու տայ յատկապէս սկաուտական թեւի հզօրացման եւ մասնաճիւղի շեփորախումբի վերակազմակերպման աշխատանքներուն:

1968ին, եղբ. Ունճեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆուլթայլի ներկայացուցչական պատուիրակութեան, որ մեկնած է Պուրկարիա եւ Ռումանիա՝ մարզական 15օրեայ շրջապտոյտի: Եղբայրը յաճախ պատասխանատուութիւն ստանձնած է մասնաճիւղի պասքեթպոլի երկսեռ խումբերու, յատկապէս Լիբանանի ֆետերասիոնի կազմակերպած մրցումներուն: Ան մասնակցած է Մերձաւոր Արեւելքի եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովներուն:

1976ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, եղբ. Ունճեան փոխադրուած է Միացեալ Նահանգներ եւ հաստատուած է Սան Ֆեռնանտո Հովիտի շրջանը: 1977-1978, երկու յաջորդական տարիներ ան հրաւիրուած է Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ Նաւասարդեան մարզախաղերու ֆուլթայլի մարզաճիւղի յանձնախումբի անդամ:

1978ին, Հ.Մ.Ը.Մ.ական քանի մը եղբայրներու հետ խորհրդակցաբար, ան նախաքայլը առած է Հովիտի մէջ հիմնելու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը, որուն առաջին ընտրեալ վարչութեան մաս կազմած է ան:

Թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Միացեալ Նահանգներու մէջ, եղբայրը Հ.Մ.Ը.Մ.ին



առնթեր լուրջ աշխատանք տարած է իր բնակած շրջաններու հայկական կեանքէն ներս: 1947էն ի վեր անդամ է Հ.Յ.Դաշնակցութեան եւ կուսակցական պատասխանատու պաշտօններ կրած է Նոր Սիսի «Իշխան» եւ Սան Ֆեռնանտո Հովիտի «Ռոստոմ» կոմիտէութեանց մէջ, թէ՛ իբրեւ մարմնի անդամ եւ թէ՛ իբրեւ համեստ ընկեր: 1956-1976 եղած է Նոր Սիսի Ազգ. Աքսոր Գասարճեան Վարժարանի հոգաբարձութեան անդամ: Իսկ 1982-2004, որոշ ընդմիջումներով՝ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ, տարիներ ստանձնելով փոխ ատենապետի եւ գանձապահի պաշտօնները: Նոյն եկեղեցիէն ընտրուած է նաեւ Ազգային երեսփոխան:

Եղբայրը իր ազգանուէր գործունէութեան համար արժանացած է հետեւեալ գնահատագիրներուն.-

- 1992ին, Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ:
- 1995ին, Հ.Յ.Դ. «Ռոստոմ» կոմիտէութեան կողմէ:



Տէր եւ տիկ. Ալպէր Ունճեան Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հետ:

- 1998ին, Հ.Մ.Ը.Մ.ի 80ամեակին առիթով պարգևատրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ:

- 2004ին, Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» մասնաճիւղի 25ամեակին առիթով գնահատագիր ստացած է մասնաճիւղի վարչութեան կողմէ:

- 2007ին, Հ.Յ.Դ. «Ռոստոմ» կոմիտէութեան 50ամեակին:

Եղբոր համար «Հ.Մ.Ը.Մ.ը հայ երի-

տասարդն ու պատանին թրծող դպրոց մըն է: Հոն է, որ հայ երիտասարդը կեանքի դժուարութիւնները յաղթահարել կը սորվի եւ ազգային իր նկարագիրը կը կերտէ: Նաեւ, Հ.Մ.Ը.Մ. տիպար քաղաքացիներ դաստիարակելով, ապագայ մեր ղեկավարութիւնը կը պատրաստէ: Այս իմաստով ես մեծ հաւատք ունիմ մանաւանդ սկստական շարքերուն, ուր «Առողջ միտք առողջ մարմնի մէջ» նշանաբանին հետեւելով, առաւել կը յուսադրեն մեզ ապագայի նկատմամբ»:

Պատուաբեր այս տիտղոսին արժանացման առիթով եղբայր Ունճեան հետեւեալ արտայայտուեցաւ. «Մեծ անակնկալ էր ինձի համար նման պատիւի մը արժանանալը: Միւս կողմէ սակայն ուրախացայ, որ Հ.Մ.Ը.Մ.ը տարիներու աշխատանքս կ'արժեւորէր «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը ինձի շնորհելով: Բնական է, ինձի հետ ուրախացաւ ընտանիքս, որովհետեւ իրենք ալ Հ.Մ.Ը.Մ.ական շունչով մեծցած են»:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europelhotel.am

Reservations

www.europelhotel.am

ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՃԱՇ-ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Կիրակի, 2 Յունիսի կէսօրին, Կլէնտէյլի «Մինսք» ճաշարանը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Երջանային Վարչութեան կազմակերպած Նաւասարդեան ճաշ-հանդիպումը: Զեռնարկը նպատակ ունէր հրաւիրեալներուն փոխանցել Նաւասարդեան յաղթանակի պարահանդէսի եւ ընդհանրապէս Նաւասարդեան աշխատանքներուն վերջին նորոթիւնները:

Բարի գալուստի խօսքերով ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան յաղթանակի պարահանդէսի պատասխանատու քոյր Անօ Մանսուրեան եւ հրաւիրեց Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանը, որպէսզի վարէ ձեռնարկը:

Եղբ. Արթինեան առաջին հերթին ներկայացուց օրուան հիւրերը, որոնց կարգին էին 2008ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Ալպէր Ունճեան, Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահներ տէր եւ տիկ. Յովսէփի եւ էյօ Պոյաճեան եւ եղբ. տոքթ. Սարգիս Արեւեան, Երջանային յանձնախումբերու անդամ-անդամուհիներ, մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի մօտիկ բազմաթիւ բարեկամներ:

Ապա, եղբայրը յատուկ հպարտանքով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 33րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններն ու իրենց դուստրը՝ Սօսէն:

«Եղբ. Վահագն Թովմասեան Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպիչներէն, աշխոյժ եւ համբերատար անձնաւորութիւն մըն է Հ.Մ.Ը.Մ-էն ներս, իսկ անոր կինը Պայծառ՝ այն զօրաւոր անձնաւորութիւնն է, որ լուռ ու մունջ անսահման բարեկամները գործած է զաղութիւն եւ անոնց աղջիկը՝ Սօսէն, որ պասքէթպոլի մարզիկ, արծուիկ եւ Հ.Մ.Ը.Մ-ի սիրահար մըն է: Ահա ընտանիք մը, որ մեծցած է Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ եւ այդ պատճառով ալ անոնք եղակի են մեզի համար», յայտարարեց եղբ. ատենապետը:

Ապա, ան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի մօտիկ բարեկամներէն տիկ. Լիոնիկ Եխրտրմեանը եւ Երջանային Վարչութեան անունով պարգեւատրեց զայն «Community Service Award»ով, առ ի երախտագիտութիւն Հ.Մ.Ը.Մ-ին եւ զաղութիւն կատարած իր շարունակական աջակցութեան եւ բացառիկ ծառայութիւններուն համար:

Յայտնենք, թէ տիկ. Եխրտրմեանի միջամտութիւններուն շնորհիւ, այս տարի «Վաքովիա» դրամատունը Նաւասարդեանի գլխաւոր հովանաւորներէն մէկը եղաւ եւ հովանաւորեց Նաւասարդեան յաղթանակի պարահանդէսը:

Անակնկալի եկած քոյրը շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար եւ ըսաւ. «Մեծապէս ուրախ եմ, որ Հ.Մ.Ը.Մ-ը «Վաքովիա» դրամատան ներկայացուցիչ: Բախտաւոր եւ հպարտ կը զգամ, որ կը գործեմ հաստատութեան մը մէջ, որ ճանաչում կու տայ եւ կը զօրակցի Հ.Մ.Ը.Մ-ի նման կազմակերպութեանց, որոնք մեծապէս օգտակար կը հանդիսանան հանրութեան», ընդգծեց պարգեւատրեալ քոյրը եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց «Վաքովիա» դրամատան պատասխանատուներէն տիկ. Մորիսիա Տէյլիսին, որ հաւատարմով Հ.Մ.Ը.Մ-ին,



գործակցութիւն ստեղծեց դրամատան եւ մեր շատ սիրելի կազմակերպութեան միջեւ:

Իր կարգին, սրտի գոհունակութեան իր արտայայտութիւնը ունեցաւ «Վաքովիա» դրամատան հանրային կապի բաժնի պատասխանատու տիկ. Տէյլիս, որ զուգահեռներ գծելով դրամատան եւ Հ.Մ.Ը.Մ-ի մինչեւ ընդգծեց, թէ զոյգ հաստատութիւններն ալ կը ծառայեն հանրութեան, որուն համար հպարտ է ստեղծուած ներկայ գործակցութեան համար:

Ոգեւորիչ այս ներկայացումներէն ետք, եղբ. Արթինեան ներկայացուց Նաւասարդեան յաղթանակի պարահանդէսի հանդիսավար Բաֆֆի Համբարեանը, պարահանդէսի յանձնախումբի մօտ Երջանային Վարչութեան կապ քոյր Անօ Մանսուրեանը, յանձնախումբի ատենապետներ՝ եղբ. Ծանթ Հայկապեանն ու քոյր Ժասիկ Զառահեանը: Եղբայրը նաեւ յատուկ շնորհակալութիւններ յայտնեց տէր եւ տիկ. Վազգէն Քէյփիկեանին, որ ամէն տարի կը հովանաւորեն Նաւասարդեանի տպագրական դժուարին ու բազմաժախ բոլոր աշխատանքները, ինչպէս նաեւ «Մինսք»ի սեփականատէր եղբ. Միհրան Զուլաբեանին, որ միշտ իր ճաշարանը կը տրամադրէ Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան եւ այլ կարեւոր ձեռնարկներու իրագործման համար:

Ապա, եղբ. Արթինեան բեմ հրաւիրեց քոյր Զառահեանը, որ բացատրութիւններ տուաւ Նաւասարդեանի յաղթանակի պարահանդէսին մասին:



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՅՅՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ուսանող լայն ժողովրդականությունը
վայելող Նախասարգեան պատրաստ-
պուլի գտումի մրցումները:

Պատրաստպուլի մրցումներուն
առընթեր, Շաբաթ, 21 Յունիսի առա-
ւօտեան ժամը 7.45-12, Փիրս Գոլէճի լո-
ղաւազաններուն մէջ տեղի ունեցան Ա.-
Զ. դասակարգերու եւ զանազան մա-
կարդակներու երկսեռ մարզիկ-մարզի-
կուհիներու մրցումները:

Կիրակի, 22 Յունիսին, դարձեալ
Պրըմիէնկհամ Հայ Սքուլի շրջափակէն
ներս տեղի ունեցան թեթեւ ակթէթի բո-
լոր դասակարգերու (Ա. - Է.) անհատա-
կան եւ խմբային երկսեռ մրցումները,
որոնք կ'ընդգրկէին 50, 100, 200, 400,
800, 1500 եւ 3000 մեթր վազքի, մէկ քայլ



ոստումի եւ զունդ նետելու անհատա-
կան մրցումները, ինչպէս նաեւ՝ 4 x 50,
4 x 100 եւ 4 x 400 դրօշարշաւի մրցում-
ները:

Այս տարի բացառիկ երեւոյթ էր մեծ
թիւով Ա. եւ Բ. դասակարգի երկսեռ
մարզիկ-մարզիկուհիներու մասնակ-
ցութիւնը 1500 եւ 3000 մեթր երկար
վազքի մրցումներուն, ինչ որ մեծ խան-
դավառութիւն ստեղծեց մարզադաշտե-
րուն վրայ: Գեղեցիկ երեւոյթ էր յատ-
կապէս փոքր դասակարգի մարզիկ-
մարզիկուհիներուն համար, տեսնել
իրենց մարզիչներուն եւ վարչական պա-

Մարտ Բէշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

2

1-22 Յունիսի շաբաթավեր-
ջին մեծ եռուզեռի մէջ էր
Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ.
Նահանգներու մեծ ընտա-
նիքը: Շրջանի մարզասէր-
ներու ժամադրավայրը անգամ եւս
դարձած էր Պրըմիէնկհամ Հայ Սքուլը,
ուր մեծ ոգեւորութեամբ շարունակ-



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու
Շրջանային Վարչութեան մարզական խորհուրդը:



տասխանատուներուն մասնակցութիւնը երկար վազքի մրցումներուն:

Այս տարի եւս յատուկ զարկ տարւեցաւ Ֆուլթայլի մարզաճիւղին, որուն համար գործեց եօթը հոգինոց մարզական ենթայանձնախումբ մը, եղբ. Ալ-

պէրթ Իսկանտարիի գլխաւորութեամբ: Յանձնախումբին մօտ Շրջանային Մարզական Խորհուրդի կապը եղաւ եղբ. Արմէն Մահտեսեան:

Շրջանային Մարզական Խորհուրդի գործավար եղբ. Սեւակ Կարապետեանի

հաստատումով, «Ֆուլթայլը եւս սկսած է մեծ ժողովրդականութիւն վայելել եւ տարուէ տարի կը բազմանան մրցումներուն մասնակցող խումբերու թիւը, որ այս տարի հասած է 43ի: Թէեւ մրցումներուն կը մասնակցին Ա. - Է. դասակարգի երկսեռ խումբեր, սակայն ակնյայտ է յատկապէս փոքր դասակարգի խումբերուն արձանագրած աճը, որ մեծապէս կը յուսադրէ մեզ: Մեր փափաքն է, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ-մարզիկուհիները լաւապէս մարզուին եւ օր մը մեր բոլորին պարծանքը դառնան մարզական աշխարհէն ներս»:

Նշենք, որ Նաւասարդեանի Ֆուլթայլի մրցումները աւելի հետաքրքրական դարձնելու եւ մանաւանդ խումբերուն միջեւ մրցակցութեան ոգին զօրացնելու համար, Կլէնտէյլ քաղաքի Ֆուլթայլի լիկէն երկու խումբեր հրաւիրուեցան մասնակցելու Նաւասարդեանի Ֆուլթայլի մրցումներուն:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՅՅՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՍ

Մարո Քէշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Կիրակի, 6 Յուլիս 2008ի կէս գիշերին, Վան Նայսի Պրոմիսիոն Հայ Աքոլի շրջափակէն ներս տօնական ուրախ միջնորդութի մը մէջ իրենց աւարտին հասան ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ակաճներ Վահագն եւ Պայծառ Թովմասեաններու պատուոյ նախագահութիւնը վայելող Նաւասարդեան ՅՅրդ Մարզախաղերը:

Տասնեակ հազարաւոր մասնակիցներ եւ ութ հազարէ աւելի հաշուող շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, անգամ մը եւս հայկականութեամբ լեցւած, վերապրեցաւ հայոց պատմութեան անցեալի փառահեղ օրերը:

Եզակի այս նախաձեռնութեան փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ նոյն վարժարանի ֆուտպոլի մարզադաշտին վրայ: Հակառակ սաստիկ տաք օդին, հազարաւոր համակիրներ ժամանած էին Պրոմիսիոն Հայ Աքոլի մարզադաշտը մասնակից դառնալու մեծաշուք այս ձեռնարկին:

Օրուան յայտագիրը սկիզբ առաւ ժամը 5.30ին: Երջանի Սկսուտական Խորհուրդի կազմի եւ Երջ. Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանի գլխաւորութեամբ մարզադաշտ

առաջնորդուեցան Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Նաւասարդեան ՅՅրդ Մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններ եւ 2008ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ակաճ» եղբ. Ալպէր Ունճեան, կնոջ՝ Շաքէին հետ:

Օրուան խօսնակներն էին քոյր Նորա Զափարեան (հայերէն) եւ եղբ. Կարպիս Շիրտումեան (անգլերէն), որոնք ներկաները ողբերգիքին՝ Նաւասարդեան Մարզախաղերու ՅՅ տարիներու նուաճումներն ու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը ծանօթացնելով:

Նախքան պաշտօնական յայտագրին սկսիլը, ներկաները վայրկեան մը յոտնկայս լուրթեամբ յարգեցին յիշատակը յաւիտ քաթնուած Հ.Մ.Ը.Մ.ակաճներուն:

Երջանային Վարչութեան ատենապետին եւ պատուոյ նախագահին արտօնութեամբ ու Երջանային Ընդհանուր Խմբապետ եղբ. Հրայր Պոյաճեանի հրահանգով տեղի ունեցաւ դրօշակի տպաւորիչ արարողութիւն: Երջանային Վարչութեան շեփորախումբին առաջնորդութեամբ, շրջանի արի-արեւոյշներէ կազմուած դրօշակիրներու խումբը հաստատակամ քալուածքով մարզադաշտ ներկայացուց Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նաւասարդեան դրօշները, բարեւեց պատուոյ հիւրերը եւ կատարեց դրօշակի արարողութիւնը, հետեւե-

լով Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներուն, զորս կատարեց Երջ. Վարչութեան շեփորախումբը, գլխաւորութեամբ եղբ. Վարդան Ասատուրեանի:

Այնուհետեւ, Ֆրեզնոյէն հեծելարշաւով մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 26րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վաչէ Սողոմոնեանը, երեք հեծելանորդներու ընկերակցութեամբ, մեծ ողբերգիքի ստեղծելով մարզադաշտէն ներս:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան կը փոխանցէ իր խօսքը:





Ներկայացուցեցան օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի գլխաւոր փոխ հիւպատոս Մեսրոպ Շապոյեան, Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Թիւֆէնքճեան, Հ.Մ.Լ.Մ-ի Նաւասարդեան ՅՁրդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետրիկեան, «Տիպար

Հ.Մ.Լ.Մ-ական» եղբ. Ալպէր Ունճեան, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամներ Տէյվ Ուիլլըր, Լոս Անճելըսի դատախազի թեկնածու՝ Մայքըլ Ամիրեան, Կլէնտէյլի Հանրային Վարժարաններու Ուսումնական Խորհուրդի նախագահ Կրէյկ Գրիգորեան, Կլէնտէյլի Քաղաքապետական Խորհուրդի քարտուղար Արտաշէս Քացախեան, շրջանի ծանօթ «Շէվազ» Ֆութպոլի խումբի հայազգի մարզիկ Ալէքօ Իսկէնտէրեան, «Վաքովիա» դրամատան, Ամերիկեան Սկաուտութեան, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, անցեալի պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Լ.Մ-ական»ներ, հիւրեր, ծնողներ եւ բազմահարիւր Հ.Մ.Լ.Մ-ականներ:

բաժակները նուիրեց ընտանիքին վաղամեռիկ որդւոյն եւ եղբօր՝ Փիթըր Նուրեանի յիշատակին: Ան ուրախութեամբ ողջունեց այս տարուան «Տիպար Հ.Մ.Լ.Մ-ական» եղբ. Ալպէր Ունճեանը, որ իր ամբողջ կեանքին ընթացքին ծառայած է Հ.Մ.Լ.Մ-ին: Ան ողջունեց նաեւ Նաւասարդեան ՅՁրդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետրիկեանը՝ իր նուիրումին համար:

Եղբ. Արթինեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց 2008ի պատուոյ նախագահներ Վահագն եւ Պայծառ Թովմասեաններուն եւ իրենց դստեր՝ Սօսէին, որոնք միասնաբար իրենց լաւագոյնը տուած են Հ.Մ.Լ.Մ-ին եւ դադուութիւն: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ազգային Առաջնորդարանին, Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Յ.Դ.աշնակցութեան եւ շրջանի քոյր կազմակերպութիւններուն, Շրջանային Վարչութեան իր գործընկերներուն եւ պաշտօնէութեան, Նաւասարդեան եւ զանազան յանձնախումբերուն, մասնաճիւղերուն, ծնողներուն, մարզիչներուն, կամաւորներուն, Պրըմիէրկհամ Հայ Սքուլի պատասխանատուներուն, անցեալի պատուոյ նախագահներուն եւ «Տիպար Հ.Մ.Լ.Մ-ական»ներուն, բոլոր հովանաւորներուն եւ յատկապէս գլխաւոր հովանաւոր «Վաքովիա» դրամատան եւ շրջանի հայութեան, որոնք ջանք չխնայեցին զօրակցելու եւ Հ.Մ.Լ.Մ-ը բարձունքներ առաջնորդե-

Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան, որ ողջունելէ ետք ներկաները ընդգծեց, թէ «Պատմական պահ է Հ.Մ.Լ.Մ-ին համար: Շրջանի Հ.Մ.Լ.Մ-ի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Շրջանային ընդհանուր բանակումը տեղի պիտի ունենայ մեր անձնական բանակավայրին՝ Հ.Մ.Լ.Մ-ի Թեքոյա բանակավայրին մէջ: Մեր նոր կեդրոնատեղիով պիտի շարունակենք Հ.Մ.Լ.Մ-ը զօրացնել, որպէսզի ծառայէ գալիք սերունդներուն»:

Եղբայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց Նուրեան ընտանիքին, որ այս տարուան Նաւասարդեան յաղթանակի





Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հայրական իր պատգամին փոխանցման պահուն:

րու: Եղբ. Արթինեանի ելոյթէն ետք, իր սրտի խօսքը փոխանցեց փոքրիկն Սօսէթովմասեան, մեծ ոգեւորութիւն ստեղծելով ներկաներուն մօտ եւ ըսաւ. «Ես կը սիրեմ Հ.Մ.Ը.Մ-ը, այն ինչ որ ան կ'ընէ բոլոր երեխաներուն համար: Շնորհակալութիւն բոլոր կամաւորներուն իրենց դժուարին աշխատանքներուն համար: Շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ-ին, որ մեզ ընտրեց Նաւասարդեան Մարգարեան պատուոյ նախագահ: Շնորհակալութիւն Սթիւին, զիս ծնողքիս առաջին դուստրը կոչելուն համար: Շնորհակալութիւն հօրս, բոլոր ընկերներս Հ.Մ.Ը.Մ. բերելուն եւ պասքեթպոլի մեր խումբը մարզելուն համար: Այսօր ես Նաւասարդեանի նախագահ եմ ծնողքիս հետ եւ օր մը թերեւս կ'ընամ Ամերիկայի նախագահը ըլլալ»...: Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան անունով շնորհակարար

կան ելոյթ ունեցաւ փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, որ առաջին հերթին շնորհակարարեց Շրջանային Վարչութիւնը, մասնաճիւղերը եւ Շրջանային յանձնախումբերը, որոնք Նաւասարդեան 33րդ մարգարեան յաջողութեամբ աւարտեցին: «Տարի մը եւս գործեցիք, ճիշդ չինայեցիք, ժամանակ չինայեցիք: Օրեր, շա-



Նաւասարդեանի դրօշը Շրջանային Խմբապետին ձեռամբ կը յանձնուի Շրջանային Վարչութեան ատենապետին:

բաթներ եւ ամիսներ աշխատեցաք, որպէսզի այս ծանր, այս մեծ աշխատանքը յաջողի: Ձեր վարձքը կատար սիրելի քոյրեր եւ եղբայրները: Իսկապէս արժանի էք գնահատանքի», ընդգծեց եղբայրը եւ շնորհակալութիւն յայտնեց մարզիկներուն եւ սկաուտներուն, որոնք իրենց մարգարեաներուն եւ աշխատանքներուն մէջ միշտ Հ.Մ.Ը.Մ-ը բարձր պահեցին:

Եղբայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց նաեւ ներկաներուն, Հ.Մ.Ը.Մ-ականներուն եւ համակիրներուն, որոնք միշտ թիկունք կը կանգնին իրենց սիրած կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ին եւ որուն լաւագոյն փաստը իրենց ներկայութիւնն է:

Կրօնականի իր օրհնութիւններն ու շնորհակարարութիւնները փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ առաջին հերթին հոգեկան իր գոհունակութիւնը յայտնեց պատմական այս պահուն ներկայ գտնուելուն համար եւ ըսաւ. «Ամբողջ 90 տարի, Հ.Մ.Ը.Մ-ը նախ աշխարհասփիւռ հայութեան, իսկ վերջին 19 տարիներուն նաեւ մայր հայրենիքի հողին վրայ գործեց «Առողջ Միտք՝ առողջ մարմնի մէջ» սկզբունքով, մեր ազգային հինաւուրց ժառանգութիւնները նորահաս սերունդներուն փոխանցելու պատրաստակամութեամբ եւ հայ պատանին ու երիտասարդը ախտավարակ եւ օտարոտի ազդեցութիւններէ զերծ պահելուն ախանձախնդրութեամբ:

«Այսօր ալ տարբեր չէ: Այսօր եւս, երբ այս մարգարաշտին մէջ ականատես կ'ըլլանք Հ.Մ.Ը.Մ-ի մեծ իրագործումներուն, հաւասարապէս վկան կը դառնանք այն իրականութեան, որ վարչական թէ մարզիկ, պատանի, երիտասարդ ու երէց, իբրեւ մեկնակէտ ու վախճանակէտ՝ ի մտի ունին հայութիւնը, հայկականութիւնը, մեր ազգային ժառանգութիւնները:

Ապա, Առաջնորդ Հայրը կոչ ըրաւ հայ երի-



Նաւասարդեան 33րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններ եւ իրենց դուստրը՝ Սօւէն, Լոս Անճելըսի մասնաճիւղի անդամներու հետ:



տասարդութեան, որ տէր կանգնի հայկական աւանդներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի ու մեր ազգային հաստատութեանց յարկերուն տակ հարազատութեամբ ապրի, օրինակելի զոհաբերութեամբ ու նուիրումով դէպի նոր տասնամեակներ տանի Հ.Մ.Ը.Մ-ի ճահը:

Ապա, շնորհաւորելով մարզախաղերու պատուոյ նախագահը, տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ը, Նաւասարդեան ձեռնարկներու կազմակերպիչներն ու մասնակիցները, Սրբազան Հայրը խնդրեց Աստուծոյ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշի օրհնութիւնը եւ մաղթեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ի անունով շահուած իւրաքանչիւր

բաժակ, իբրեւ հպարտութեան իրագործում, վերադառնայ իւրաքանչիւր հայու եւ ազնիւ մրցակցութեան խանդով վարակէ մարզիկ եւ համակիր: Վերջապէս, թող Նաւասարդեան այս խաղերը վերանորոգ խանդավառութեամբ շարունակուին՝ Հ.Մ.Ը.Մ-ի վահանն ու եռագոյնը առաջնորդելով դէպի նոր տասնամեակներ, իբրեւ բաժին ու մասնակցութիւն հայրութեան ազգային ու հայրենական բոլոր պահանջներուն ու երազներուն իրականացման»:

Սրտառուչ այս պատգամներէն ետք, սկիզբ առաւ այնքան սպասուած շքերթը: Շրջանային Վարչութեան հովանա-

ւորած շեփորախումբի ազգային եւ յեղափոխական ոգեւորիչ եղանակներու ընկերակցութեամբ տողանցեց Հ.Մ.Ը.Մ-ի բովանդակ ընտանիքը: Յաջորդաբար մարզադաշտ ներկայացան չրջանի 17 մասնաճիւղերը: Անոնք 90ամեայ Հ.Մ.Ը.Մ-ի կարեւոր մասնիկը ըլլալու հպարտութեամբ տողանցեցին, ամբողջական շարքերով, ինքնավստահ ու յաղթական:

Առաջին անգամ տողանցեցին չրջանի Հ.Մ.Ը.Մ-ին ծնունդ տուած Լոս Անճելըսի մասնաճիւղին անդամները: Անոնք հպարտութեամբ բարեկեցին ներկաները եւ յատկապէս մասնաճիւղի

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՄԱՌՈՐՈՒՄԸ

ԼՈՂ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Զովիտի «Մասիս» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղ

ԹԵԹԵՒ ԱԹԼԵԹ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Գրետէնթա Զովիտի «Շանթ» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քաունթրիի «Սարդարապատ» մասնաճիւղ

ԹԵՆԻՍ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ

ՎՈՒՆԴՈՒԼ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Զովիտի «Մասիս» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ

ՖՈՒԹՊՈՒԼ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Զովիտի «Մասիս» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

ՊԱՍՔԷԹՊՈՒԼ

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Գրետէնթա Զովիտի «Շանթ» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղ



երկար տարիներու անդամ տէր եւ տիկ-
թովմասեանները եւ առ ի գնահատանք
անոնց ստանձնած պատուոյ նախագա-
հութեան դժուարին պարտականու-
թեան՝ մասնաճիւղին 40ամեակի խորհրդ-
դանիչը ներկայացնող դրօշ մը եւ
Հ.Մ.Ը.Մ-ի շուշանածաղիկը կրող յու-
շամետալ մը նուիրեցին անոնց եւ «Տի-
պար Հ.Մ.Ը.Մ-ական»ին:

Յատուկ յարգանք ցուցաբերեց նաեւ
«Մասիս» մասնաճիւղը իր անդամներէն
եղբ. Ալպէր Ունճեանին՝ «Տիպար
Հ.Մ.Ը.Մ-ական-2008»ի տիտղոսին ար-
ժանանցման ուրախ առիթով:

Մասնաճիւղի ներկայացուցիչները
փունջ մը ծաղիկ նուիրեցին տիկ. Ունճ-
եանին եւ քոյր թովմասեանին, իսկ եղբ.
Ունճեանին՝ մասնաճիւղի սկստական
բաժանմունքին կողմէ պատրաստուած
գեղեցիկ ձեռագլին աշխատանք մը, մաս-
նաճիւղի սկստական բաժանմունքի
քոյր-եղբայրներու ստորագրութեամբ:

Գեղեցիկ էր նաեւ Փասատինայի
«Ազատամարտ» մասնաճիւղին ներկա-

յացուցած շտապ օգնութեան հարազատ
պատկերը, որ մեծապէս տպաւորեց ներ-
կաները:

Այսպէս, յաջորդաբար տողանցեցին
չրջանի 17 մասնաճիւղերու շարքերը:
Տողանցեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Թեքոյա բա-
նակավայրի յանձնախումբը:

Բոլոր տողանցողներն ալ «Բարձրա-
ցիւր-բարձրացուր» նշանաբանի հաւա-
տարմութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ-ականի ինք-
նավստահութեամբ բարեւեցին պատ-
ուոյ հիւրերն ու գիրենք խրախուսող ծո-
վածաւալ բազմութիւնը:

Պատուոյ հարթակին առջեւ մարզա-
խաղերու ախոյեանները ստանձնեցին
յաղթանակի իրենց բաժակները եւ շար-
ւեցան դաշտին կեդրոնը: Հ.Մ.Ը.Մ-ի տո-
ղանցող շարքերով մեծապէս ոգեւորուած
ներկաները երկարաշունչ ծափողջոյննե-
րով եւ ուրախութեան բացազանչութիւն-
ներով ողջունեցին տողանցողները:

Օրուան խօսնակները գնահատական
խրախուսիչ արտայայտութիւններով
մասնաճիւղերը ներկայացուցին եւ

անոնց արձանագրած մրցանակները
յայտարարեցին:

Յայտագրի վերջին բաժնով, Նաւա-
սարդեան դրօշը Շրջանային Ընդհա-
նուր Խմբապետին ձեռամբ յանձնուե-
ցաւ պատուոյ նախագահին:

Ներկաները գոհունակութեամբ
փութացին փառատօնի շրջափակը,
մասնակցելու Նաւասարդեան մարզա-
խաղերը եզրափակող փառատօնի վեր-
ջին յայտագրին, որուն ընթացքին ելոյթ
ունեցան ԺողէՖ Գրիգորեան եւ Անթ-
ուան Պէգճեան: Անգամ մը եւս ելոյթ ու-
նեցաւ Գառնիկ Սարգիսեան, որուն ազ-
գային-յեղափոխական երգերուն ընկե-
րակցեցաւ հրավառութիւնը, մեծ խան-
դավառութիւն ստեղծելով ներկանե-
րուն մօտ: Յայտագրի վերջին երգիչն էր
Փօլ Պաղտատլեան: Նաւասարդեան
խրախճանքը շարունակուեցաւ մինչեւ
կէս գիշեր:

with the complements of

Restaurant Al-Mayass

30 ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐ ԻՐԵՆՑ ԽՈՍՏՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ ՄԻԱՅԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի «ՇԱՆԹ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՇԱՐՔԵՐՈՒՄՆ



Արեւոյշ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Շաբաթ, 10 Մայիս 2008ի կէսօրէ ետք ժամը 4.30ին, Ազգային «Շամբլեան» վարժարանի սրահը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Գրեսէնթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղին սկաուտական տարեկան հանդէսը, մասնակցութեամբ հարիւրաւոր ծնողներու, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ արի-արեւոյշներու, որոնց կարգին էին նաեւ Շրջանային Վարչութեան անդամ քոյր Մարօ Քէշիշեան, Շրջանային փոխ խմբապետուհի քոյր Մարուշ Տէկիրմէնճեան եւ Շրջանային փոխ խմբապետ եղբ. Նարեկ Բադալեան:

Հանդէսին բացումը կատարուեցաւ մասնաճիւղին սկաուտական բաժանմունքին դրօշակի արարողութեամբ, գլխաւորութեամբ քոյր Սօսի Պէքարեա-

նի:

Սկաուտական Խորհուրդի անունով ներկաները ողջունեց եւ ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց քոյր Վանա Շիրիքճեան, որ առաջին հերթին բարի գալուստ մաղթեց օրուան հիւրերուն եւ յատկապէս ծնողներուն, որոնք միշտ թիկունք կը կանգնին մասնաճիւղին եւ մնայուն ներկայութեամբ կը քաջալերեն մասնաճիւղին սկաուտական բոլոր ձեռնարկները: Ապա, ան ներկայացուց օրուան ծրագիրը:

Ցայտագրի առաջին բաժինով, արծիկներու խումբը ներկայացուց խմբերգներու եւ սկաուտական կանչերու փունջ մը, մեծապէս ոգեւորելով ներկաները: Ապա, արի-արեւոյշները եւ գայլիկ-արծուիկները յաջորդաբար ներկայացուցին բուրգերու շարք մը եւ զուարճալի քանի մը խաղեր: Իսկ արեւոյշներու խումբը ինքնավստահութեամբ արտասանեց Վահան Թէքէեանի «Բարձրացում» բանաստեղծութիւնը:

Սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուեցաւ մասնաճիւղին սկաուտական 15ամեայ բեղուն գործունէութիւնը, որ ներկաներուն բարձր գնահատանքին արժանացաւ: Գեղեցիկ այս ցուցադրութեան յաջորդեց սկաուտական փոխանցումներու արարողութիւնը: Այսպէս, գայլիկական շարքերէն սկաուտական շարքեր փոխանցուեցան եղբայրներ Սեւակ Լէօն եւ Հրակ Այվազեան, իսկ արծուիկներու խումբէն արեւոյշներու խումբը՝ քոյրեր Լուի Սինանեան, Տայլտա Գասպարեան, Ռիթա Ղուկասեան եւ Սարին Պողիկեան:

Սկաուտական Նորընծայ կարգ ստացան քոյրեր Արտա ձուհարեան, Լիլիթ Սարգիսեան, Քրիստինա Պաղտասարեան, Անի Նալպանտեան, Արեւ Մարգարեան եւ Սարին Այվազեան:

Փոխ Առաջնորդի աստիճանին արժանացան եղբայրներ Գէորգ Պէքարեան, Սերժ Նալպանտեան եւ Սազօ Կարոյեան: Վարիչ Առաջնորդի՝ քոյրեր



Լարա Փանոսեան եւ Սեյլա Կարոյեան, իսկ փոխ-խմբապետի՝ եղբ. Ճորճ Պէջարեան: Իրենց օգտաշատ գործունէութեան համար գնահատագիրներ ստացան արի-արենոյձներէն քոյրեր Արեւ Մարգարեան, Անի Նալպանտեան, Սարին Այվազեան եւ եղբ. Գէորդ Պէջարեան: Արծուիկներէն քոյրեր Սարին Լէօն, Գաթիա Գէորգեան եւ Գաթիանա Աբրահամեան, իսկ գայլիկներէն եղբ. Դանիէլ Ղազարեան:

Ուրախառիթ այս փոխանցումներուն յաջորդեց մասնաճիւղի սկստական թեւին խոստման արարողութիւնը: 12 կնքահայրեր խոստում տուող արի-արենոյձներուն յիշեցուցին սկստական դաւանանքի կէտերը, անոնց գործադրութեան անհրաժեշտութիւնը եւ վառեցին համապատասխան մոմը: Այնուհետեւ, 15 գայլիկ-արծուիկներ եւ 15 արի արենոյձներ իրենց խոստումը կատարեցին, հրապարակաւ խոստանալով ըլլալ հաւատարիմ Աստուծոյ, Ազգին ու

Հայրենիքին, ինչպէս նաեւ՝ սկստական դաւանանքին:

Ներկաները յոտնկայս եւ երկարաշունչ ծափերով ընդունեցին խոստում տուած խումբին պաշտօնական մուտքը սկստական շարքերէն ներս: Մասնաճիւղին վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Ալէք Արարատեան, որ անդրադառնալով մասնաճիւղին 15ամեայ բեղուն գործունէութեան եւ յատկապէս սկստական թեւին արձանագրած նուաճումներուն, շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղին երէցներուն, երիտասարդ խմբապետներուն, ծնողներուն եւ սկստներուն, որոնց հաւատարմութեան, մտերմութեան եւ շարունակական զօրակցութեան շնորհիւ զօրացած ու բազմացած է մասնաճիւղին սկստական թեւը:

Եղբայրը հպարտանք յայտնեց մասնաճիւղին սկստական բաժանմունքին կատարած հայանուէր աշխատանքներուն համար եւ խրախուսեց զանոնք ըլլալու մասնաճիւղի ապագայ ղեկա-

վարները:

Շրջանային վարչութեան պատգամը փոխանցեց քոյր Մարո Քէշիշեան, որ մեծապէս գնահատեց մասնաճիւղին Սկստական Խորհուրդը իր հայանուէր գործունէութեան համար, որուն լաւագոյն օրինակը բազմացած շարքերով կատարուած օրուան շնորհաւորելի ձեռնարկն էր:

Քոյրը կոչ ըրաւ նոյն հաւատքով շարունակել պատանիներու դաստիարակչական աշխատանքները, որպէսզի անոնք հայ ազգին ու հայրենիքին ծառայելու պատրաստակամ ըլլան, առաւել զարկ տալով հայ լեզուի ուսուցման:

Գեղեցկօրէն պատրաստուած հանդիսութեանէն ետք, ներկաները հիւրասիրուեցան մասնաճիւղին Սկստական Խորհուրդին կողմէ:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՆ ՏԻԷԿՈՅԻ «ՍԵԼԱՆ» ՄԱՍՆԱՃԻՐԸ ՏՕՆԱԽՄԲԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԸ

Մարտ Բեռլինում
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Շաբաթ, 7 Յունիսին, Սան Տիէկոյի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ սրահը, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու մասնակցութեամբ տօնախմբուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Տիէկոյի «Սելան» մասնաճիւղին 25ամեակը, մեծ ոգեւորութիւն ստեղծելով մասնակիցներուն մօտ:

Ձեռնարկին բացման խօսքն ու հանդիսավարութիւնը կատարեց ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Էմիլ Մաղաքեան, որ առաջին հերթին հրաւիրեց Տաթև Աւագ Քհնյ. Թաթևուհեան օրհներու սեղանները: Յաջորդեց ընթրիքը: Ներկաները միաժամանակ վայելեցին մասնաճիւղին 25ամեայ պատմութիւնը ներկայացնող սահիկներու ցուցադրութիւնը:

Ընթրիքէն ետք, եղբ. Մաղաքեան հպանցիկ ակնարկ մը նետելով մասնաճիւղին 25ամեայ պատմականին վրայ, ընդգծեց անոր ստեղծման ազգանպաստ պատճառները եւ ներկայացուց մասնաճիւղին առաջին վարչութեան ձեռնարկին մասնակից քոյր Երլանտա Չէմնիթսը, Ռոպէրթ Տապաղեանը, Կարինէ Իսմայիլեանը եւ ըսաւ. «Պատմական իր կարծ այս ժամանակաշրջանին, «Սելան» մասնաճիւղը բազմաթիւ մարտահրաւէրներ դիմագրաւելով իր արդար բաժինը բերաւ գաղութին կազմութեան, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներու չրջանի օրինակելի մասնաճիւղերէն մէկը հանդիսացաւ:

«... Այս մասնաճիւղը մեծ գործ կատարեց անցնող 25ամեակին: Թէեւ մենք ունեցանք ինքնավստահ սկիզբ մը, սակայն մեր աշխատանքը նոր սկսաւ: Մենք երկար, պայծառ ու յաւիտենական ճամբայ մը ունինք մեր առջեւ եւ այնքան ատեն, որ հայկական գաղութ գոյութիւն ունի Սան Տիէկոյի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը կանգուն պիտի մնայ Սան Տիէկոյի մէջ: Մեր մաղթանքն է, որ այս համայնքը հզօրանայ եւ նոյնիսկ գօրակցի այլ մասնաճիւղերու:

«Մեր նպատակն է մօտիկ ապագային աշխուժացնել մեր աշխատանքները, թափ տալ սկառուտական եւ մարզական խումբերուն, ընդարձակ կեդրոն մը սեփականացնելու հեռանկարով, որպէսզի մեր յաջորդ կարեւոր ձեռնարկը տօնախմբենք մեր սեփական կեդրոնին մէջ»:

Մասնաճիւղին վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետուհի քոյր Մարալ Կիւլտալեան: Քոյրը շնորհակալութիւն յայտնեց իր անդամներուն, ծնողներուն եւ համակիրներուն նուիրական աշխատանքներով: Այս նուիրումին շնորհիւ է, որ յաջորդական 23 տարիներէ ի վեր, Փետրուարին, հարիւրաւոր մարզիկ-մարզիկուհիներու մասնակցութեամբ,



Ձախէն աջ՝ եղբայրներ Էմիլ Մաղաքեան, պարգևատրեալ Մանուէլ Մարսէլեան եւ Ռաֆֆի Վարժապետեան:

թիւն յայտնեց քոյր ներկաներուն, որոնք հաւատարմով Հ.Մ.Ը.Մ.ին, թիկունք կը կանգնին «Սելան» մասնաճիւղին:

Ապա, Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Օշին Յարութիւնեան եւ շնորհաւորեց «Սելան» մասնաճիւղին 25ամեակը, բարձր գնահատելով մասնաճիւղին գործունէութիւնը Սան Տիէկոյի հայկական փոքրաթիւ գաղութին մէջ: Եղբայրը յատկապէս ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ական հաւատքի կարեւորութիւնը, որ այս մասնաճիւղէն ներս գօրաւոր ըլլալով յաղթահարած է իր դէմ ցցուած դժուարութիւնները, կանգուն մնացած է եւ ահա այսօր հպարտութեամբ կը տօնախմբէ իր 25ամեակը:

«Այս բոլորը բնական է իրականացան անցեալի եւ ներկայի վարչութիւններուն, անդամներուն, ծնողներուն եւ համակիրներուն նուիրական աշխատանքներով: Այս նուիրումին շնորհիւ է, որ յաջորդական 23 տարիներէ ի վեր, Փետրուարին, հարիւրաւոր մարզիկ-մարզիկուհիներու մասնակցութեամբ,





յաջողութեամբ կը կազմակերպուին պասքեթպոլի միջ-մասնաճիւղային մրցումներ: Անոնք ոչ միայն կը խանդավառեն Հ.Մ.Ը.Մ-ի մրցող խումբերը, այլև՝ հայկական այս գաղութը կենդանի կը պահեն:

«Կը մաղթենք, որ Հ.Մ.Ը.Մ-ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղին 25ամեակը անկիւնադարձ մը ըլլայ մասնաճիւղին համար եւ ան բազմապատկուած ճիգով շարունակէ իրեն վստահուած ազգային պարտականութիւնը, եւ նոր 25ամեակը թեւակոխէ նորանոր նուաճումներ արձանագրելու հաստատակամութեամբ», շեշտեց եղբ. Յարութիւնեան եւ Շրջանային Վարչութեան անունով յուշանուէր մը յանձնեց մասնաճիւղին, առ ի գնահատանք իր 25ամեայ հայանուէր գործունէութեան:

Իմաստալից այս պատգամին յաջորդեց գեղեցիկ անակնկալ մը: Փոխ ատենապետ եղբ. Բաֆֆի Վարժապետեան, գեղեցիկ անակնկալով մը, մասնաճիւղին անունով պարգեւատրեց եղբ. Ման-

ուէլ Մարսէլեանը, բարձր գնահատելով անոր երկար տարիներու բեղուն գործունէութիւնը ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ-էն եւ յատկապէս մասնաճիւղէն ներս:

Այս ուրախ առիթով կարգացուցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանի շնորհաւորագիրը, ուր ընդգծելով 25 տարիներ առաջ Սան Տիէկոյի փոքրաթիւ, սակայն ջերմ գաղութին մէջ հիմնուած «Սեւան» մասնաճիւղին պատմական կարեւորութիւնը, կը վստահեցնէր, թէ ներկաներէն շատեր իրենց մարզական եւ ազգային-գաղափարական դաստիարակութիւնը ստացած են անոր շարքերուն մէջ: Անոնցմէ մէկն էր եղբ. Մանուէլ Մարսէլեանը: Ապա, մատնանը-չելով երկար տարիներու իր գործակցութիւնը պարգեւատրեալ եղբոր հետ, եղբ. Պալեան կ'ըսէր. «Այսօր Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղին 25ամեակը ուրիշ իմաստ մը եւս ունի բոլորիս համար, որովհետեւ կը յարգուի աշխա-

տանքը եղբոր մը, որուն կեանքը տասնամեակներ նոյնացած է Հ.Մ.Ը.Մ-ին հետ: Ան փոքր տարիքէն ծառայած է այս մեծ միութեան շարքերուն, հասնելով մինչեւ մասնաճիւղի վարչութեան, Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան»:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ այնքան սպասուած 25ամեակի մոմավառութիւնը: Մասնաճիւղին անցեալի եւ ներկայի 25 հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ յաջորդաբար վառեցին 25 մոմեր, մաղթելով անոր յարատեւ յաջողութիւն: Մոմավառութեան յաջորդեց մասնաճիւղի 25ամեակի կարկանդակին հատումը:

Պաշտօնական յայտագրի աւարտէն ետք, երկուն խանդավառեց երգիչ Արշամը: Ներկաները երկար ժամեր պարեցին ու զուարճացան, վերապրելով մասնաճիւղին յաղթական 25ամեակը, որուն ընդմէջէն գաղութը բազմաթիւ հայրերին նուիրեց հայ ժողովուրդին:


ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY





11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com



48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com



67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՐԵՉՆՈՅԻ «ՄԱՍՈՒՆ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 35ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Մարտ Բեռնի ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Շաբաթ, 17 Մայիսի երեկոյան, Ֆրեզնոյի հայրենական ժամադրավայրը դարձած էր Մ.Երրորդութիւն եկեղեցւոյ սրահը, ուր համախմբուած էին հարիւրաւոր հայորդիներ՝ տօնախմբելու համար շրջանի Հ.Մ.Ը.Մ.Ի «Մասուն» մասնաճիւղին հիմնադրութեան տարեդարձը: Մասնաճիւղ մը, որ ամբողջ 35 տարի ծառայեց իր գաղութին եւ փորձեց հայրենի դաստիարակել իր մարդկան եւ սկստական շարքերուն միացած երիտասարդութիւնը:

Պատմական կարեւոր այս նախաձեռնութեան հովանաւորութիւնը սիրալից քննարկումներով ընդունած էին ծանօթ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական տէր եւ տիկ. Վահէ Սողոմոնեան եւ տղայ ձեռնարկը: Ձեռնարկին ներկայ էին տեղւոյն Մ.Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վահան Քէնյ. Կոստանեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, նոյն օրը իր լիազօրմար նիստը Ֆրեզնոյի մէջ գումարած ՀՕՄԻ Շրջանային Վարչութեան կազմը, շրջանի ՀՕՄԻ «Սոֆիա» եւ «Մայր», Համագայիցի «Դանիէլ Վարուժան» մասնաճիւղերու եւ Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեօփրեան» կոմիտէի ներկայացուցիչները, Ֆրեզնոյի քաղաքապետի թեկնածու Թոմ Պոյանեան, Ուիլիամ Սարոյեանի եղբորորդին՝ շարժապատ-

կերի աշխարհէն ներս ծանօթ անձնաւորութիւն, բազմաթիւ մրցանակներու արժանացած Հանք Սարոյեան, «Մասուն» մասնաճիւղի հիմնադիրներէն եղբայրներ Մհեր Շիրտումեան եւ Սերոբ Վարդանեան, շրջանի առաջին սկստապետ եղբ. Հրաչ Գոչունեան, մասնաճիւղի նուազախումբի հիմնադիր եղբ. Բաֆֆի Սանդիկեան, բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ականներ, համակիրներ եւ հիւրեր:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ մասնաճիւղին արի-արեհոյճներու կատարած դրօշակի տպաւորիչ արարողութեամբ: Մ. Նահանգներու քայլերգը



Հ.Մ.Ը.Մ.Ի «Մասուն» մասնաճիւղի վարչութեան կազմը: Զախէն աջ՝ Յասմիկ Թոփալեան, Նշան Տէր Գալուստեան, Սօսիկ Չալուքճեան, Գօգօ Յաւանճեան, Անի Շահինեան եւ Մանուկ Գասպարեան:

մենեղեց քոյր Լիզա Փանոսեան, իսկ Հայաստանի քայլերգը՝ Հայկօ Օհաննէսեան:

Սեղանները օրհնեց եւ մասնաճիւղին տարեդարձը շնորհաւորեց Վահան Քէնյ. Կոստանեան:

Մասնաճիւղին անունով ներկաները ողջունեց եւ օրուան հանդիսավարութիւնը կատարեց վարչութեան անդամ եղբ. Գօգօ Հաւանճեան, որ մատնանշելով երիտասարդութեան դաստիարակութեան դիմադրաւած դրժարութիւնները, ըսաւ. «Միացեալ Նահանգներու մէջ կը մեծնայ սերունդ մը, որուն ազգային ոգին եւ առողջ դիմազիծը կերտելու համար կը կարօտինք լուրջ աշխատանքի, ինչպէս նաեւ զուտ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական ոգիով դաստիարակական արդիական ծրագիրներու: Օրերը փոխուած են: Նոր ձեւեր պէտք է որդեգրել, որպէս-



Կեդրոնը՝ եղբ. Նշան Գալուստեան ցոյց կու տայ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան գնահատագիրը: Զախիմ՝ եղբ. Բաֆֆի Խաչատուրեան, աջին՝ եղբ. Սթիւ Արթինեան:



զի Հ.Մ.Ը.Մ-ի անցեալի փառքը փայլուն ապագայի վերածենք»:

Ապա, մասնաճիւղին մարզական եւ սկստակական աշխատանքները ներկայացնելէ ետք, եղբայրը կող ուղղեց ներկաներուն իրենց զաւակները վստահելու Հ.Մ.Ը.Մ-ին:

Շրջանային վարչութեան պատգամը փոխանցեց մասնաճիւղին մօտ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ եղբ. Բաֆֆի Խաչատուրեան: Եղբայրը մասնաճիւղին Յամեայ բեղուն գործունէութիւնը գնահատելով ըսաւ. «Հայ ժողովուրդը միշտ հողին կապուած ժողովուրդ եղած է եւ այդ մէկը շեշտուած է նաեւ մեր երգերուն մէջ: Այսօր եթէ ակնարկ մը նետենք Միացեալ Նահանգներու մէջ գոյութիւն ունեցող հայկական մեր գաղութներուն վրայ, պիտի տեսնենք, թէ Ֆրեզնոն իւրայատուկ է, որովհետեւ միակ գաղութն է, որ հողին կապուած է: Երեւոյթ մը, որ մեծապէս գնահատելի է»:

Ապա, ան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանը, որ վարչութեան ատենապետին յանձնեց մասնաճիւղի Յամեայ գործունէութիւնը յատկանշող շնորհաւորական գնահատագիր մը:

Շրջանի Հ.Յ.Գ. «Սողոմոն Թեւրիւրեան» կոմիտէութեան անունով շնորհաւորական երոյթ ունեցաւ Հիլտա Սանդիկեան: Մասնաճիւղին Յամեակին աւելիով ան շնորհաւորեց բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականները, հաստատելով, թէ Հ.Մ.Ը.Մ-ը միշտ վայելած է կուսակցութեան հովանաւորութիւնը եւ քաջալերանքը: Ան շնորհաւորեց այն բոլոր քոյրերն ու եղբայրները, որոնք անցնող Յամեայ տարիներուն իրենց օժանդակութեամբ նեցուկ կանգնեցան մասնաճիւղին եւ ճիշդ ուղիով առաջնորդեցին զայն: Քոյրը մաղթեց, որ մասնաճիւղը աշխուժութեամբ շարունակէ իր գործունէութիւնը եւ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին լոյսին տակ համախմբէ շրջանի երիտասարդութիւնը:

Այնուհետեւ, Սեւակ Թաղէոսեան մասնաճիւղի ատենապետ եղբ. Նշան Տէր Գալուստեանին յանձնեց Քալիֆորնիոյ նահանգի եւ Ֆրեզնո քաղաքի քաղաքական տարբեր անձնաւորութիւններէն մասնաճիւղին Յամեակը

շնորհաւորող հռչակագիրներ, որոնց կարգին էին ծերակուտական Ճորճ Ռըտանովիչ, նահանգային ծերակոյտի անդամ Կէյն Քակտէյլ եւ նահանգային Խորհուրդի անդամ Մայք Վըլյալըն, Ֆրեզնոյի քաղաքապետ Ալլըն Ալթրի եւ քաղաքապետական խորհուրդի եօթը անդամներ:

Մասնաճիւղին վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Նշան Տէր Գալուստեան, որ ողջունելէ ետք ներկաները, անգամ մը եւս ներկայացուց օրուան հիւրերը: Յատկապէս կեդրոնանալով ձեռնարկին հովանաւոր տէր եւ տիկ. Վաչէ Սողոմոնեանի եւ Ճէյն Գարտաշեանի վրայ, եղբ. Գալուստեան մանրամասնեց Հ.Մ.Ը.Մ-ին ցուցաբերած տարիներու անոնց օժանդակութիւնը, ներկայացուց եղբ. Սողոմոնեանի Հ.Մ.Ը.Մ-ական կեանքը, արձանագրած յաջողութիւնները, Հայաստանի եւ Արցախի կատարած իր օժանդակութիւնները ու ըսաւ. «Քանի եղբ. Սողոմոնեանի նման Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներով շրջապատուած ենք, վստահ եղէք, որ մենք սրբազան այս աշխատանքը պիտի շարունակենք, ի սէր հայ ժողովուրդի մատղաջ սերունդին, որովհետեւ կը հաւատանք Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ անոր վեհ գաղափարաբանութեան»:

Ապա, անդրադառնալով մասնաճիւղին ստեղծման պայմաններուն, ան վստահեցուց, որ «Յամեայ տարիներէ մը նուիրեալ եղբայրներու սկսած աշխատանքը նոյն թափով եւ ոգիով պիտի շարունակուի այսօր եւ վաղը, որովհետեւ շրջանին մէջ կան Հ.Մ.Ը.Մ-ի դաստիարակութեամբ հասակ առած եղբայրներ, որոնք միշտ պատրաստ են ձեռք երկարելու եւ օժանդակելու»:

Պաշտօնական յայտագրի աւարտէն ետք երեկոյն խանդավառեցին երգիչ Փօլ Պաղտատլեան եւ իր նուազախումբը: Ուշ երեկոյեան մեծ թիւով երիտասարդներ միացան տօնախմբութեան: Ուրախ մթնոլորտը շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան ժամեր:

Ներկաները գոհունակութեամբ մեկնեցան տուն, մասնաճիւղին օգտակար ըլլալու պատրաստակամութեամբ:



Թղթակից ԲԵՍԱՊ

Հ.Մ.Ը.Մ-ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի Սկսուտ Խորհուրդին եւ խմբապետական կազմին կազմակերպութեամբ, Շաբաթ, 3 Մայիս 2008ի յետմիջօրէին, շրջանի «Սարգարապատ» սրահին մէջ նշուեցաւ «Սոկրի Օր»ը, ներկայութեամբ ծնողներու եւ քեսապահայ հոծ բազմութեան մը:

Սուրիոյ, Հայաստանի եւ սկստակական քայլերգներու ունկնդրութենէն ետք, ձեռնարկին բացման խօսքը արտասանեց քոյր Դայար Թուրիկեան: Ան





«ՄՈՎԼԻԻ ՕՐ»ՈՒՖԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԲԵՍԱՊԻ ՄԷՋ

լսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը իր թեւերուն մէջ կ'առնէ հայ մանուկներ, զանոնք կը դաստիարակէ իբրեւ գայլիկներ ու արծուիկներ, կը մղէ զանոնք լաւագոյնին, Հ.Մ.Ը.Մ-ի եւ հայ ժողովուրդի նպատակներու իրականացման ճամբուն վրայ:

Ձեռնարկին ընթացքին, գայլիկ-արծուիկները ներկայացուցին գեղարուեստական պատշաճ յայտագիր: Տեղի ունեցաւ մեծ կանչի արարողութիւն, որուն յաջորդեց Հայաստանի Հանրապետութեան 90ամեակին նուիրուած կենդանի պատկեր մը, որ ներկայացուեցաւ երկաստղ գայլիկի «Պանտալոկ» խումբին կողմէ: Միաստղ գայլիկի

«Ռաքչա» խումբը ներկայացուց հայկական պար մը: «Մենք ենք վարպետ խոհարարներ» պատկերը ներկայացուց միաստղ գայլիկի «Քաա» խումբը, իսկ կակուղ թաթիկի «Պալու» խումբը ներկայացուց գեղեցիկ պատկեր մը: «Շէր-խան» խումբը պարեց պար մը, իսկ «Պաղիրա» խումբին քոյրերն ու եղբայրները ներկայացուցին բուրգեր:

Ձեռնարկին աւարտին բեմ հրաւիրուեցաւ Եղիշէ ՔՏՆյ. Սարգիսեան: Ան իր սրտի խօսքը փոխանցեց եւ «Պահպանիչ»ով փակեց օրուան ձեռնարկը:






...ԵՒ ՀԱՎԷՊԻ ՄԷՋ

Թղթակից ՀԱԼԷՊ

Գայլիկ-արժուիկներու համար մեծ նշանակութիւն ունին Մոկլիի ու Մոկլիի աշխարհը: Այս պատճառով, վերջին տարիներուն Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի գայլիկ-արժուիկները անպայման կը նշեն «Մոկլիի Օր»ը: Այս տարի այդ օրը նախորդներէն աւելի ճոխութեամբ եւ խանդավառութեամբ նշուեցաւ, նկատի ունենալով Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 90ամեակը: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի Շաւարշ Քրիսեան եւ Գրիգոր Յակոբեան միաւորներու գայլիկները «Մոկլիի Օր»ը տօնեցին Կիրակի, 15 Յունիս 2008ին, ներկայութեամբ 250 եղբայրներու:

«Յառաջ նահատակ» քայլերգով բացուած միօրեայ գործունէութեան յայտագիրը ընթացաւ շատ արագ եւ հեզասահ: Խմբակային դրութենէն ետք կատարուեցաւ մարզանք ու նախաճաշ, ապա՝ երգի ուսուցում, կարգապահական վարժութիւններ, դասախօսութիւն, խաղեր ու ձեռային աշխատանք: Զեռային աշխատանքը մեծ հաճոյք



պատճառեց գայլիկներուն, որովհետեւ անոնք պատրաստեցին ձեռքի եռագոյն ապարանջաններ: Յայտագրին մէջ իւրաքանչեւ տեղ գրաւեց «ռալի» խաղը, ուր գայլիկները ամենայն աշխուժութեամբ եւ ճարպիկութեամբ փորձեցին խաղին ախոյեանութիւնը ձեռք ձգել:

Յայտագրի աւարտին, միաւորի երիցագոյն խումբերու՝ կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն վոհմակներու եղբայրները տեսական եւ գործնական քննութիւններէ անցնելէ ետք, ստացան իրենց

կարգի համապատասխան վկայականները, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտական Խորհուրդին: Այս առիթով, Սկաուտ. Խորհուրդին խօսքը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Աւօ Տէրվիչեան: Ան իր խօսքին մէջ շնորհաւորեց վկայական ստացող եղբայրները եւ շեշտեց, թէ անոնք են, որ ապագային պիտի ստանձնեն նոր սերունդի դաստիարակութեան պարտականութիւնը: Տեղին է նշել, որ Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակին առիթով Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդը յուշանուէրներ ցրուեց մասնակից եղբայրներուն:

Վկայական ստացած գայլիկները իրենց ուրախութիւնը շարունակեցին ազգայնաշունչ խրախմբանքով մը, ուր ազգային եւ յեղափոխական երգերու բարձրաձայն կատարումը ազդանշանը տուաւ անոնց խոստմնալից սերունդ մը ըլլալուն:

«Մոկլիի Օր»ը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:



ԵՂԲ. ԳԷՈՐԳ ԿՐՊՈՅԵԱՆԻ (ԱՊՈՒ ԿՐՊՈՅԻ) ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Գործակից Հ.Մ.Ը.Մ.ական մր
ԴԱՄԱՍԿՈՍ**

Վերջերս Դամասկոսի մէջ իր մահկանացուն կնքեց Հ.Մ.Ը.Մ.ական երէց սերունդի ներկայացուցիչներէն եղբ. Գէորգ Կրպոյեանը, բոլորին ծանօթ «Ապու Կրպօ» անունով:

Ո՛վ չէր ճանչնար եղբ. Գէորգը՝ մարզիկը, մարզիչը եւ վարչականը Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի ընտանիքին, նաեւ՝ ծանօթ դէմքը Սուրիոյ պետական շրջանակին, իբրեւ երկար տարիներու Ֆուլթպոլիստը բանակի ազգային խումբին:

Եղբ. Գէորգ ծնած էր 1925ին, Հալէպ: Ան կը յաճախէ Հալէպի Ազգ. Ձաւարեան վարժարանը: Փոքր տարիքին Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցի նախ իբրեւ սկաուտ, ապա՝ իբրեւ Ֆուլթպոլիստ: 1946ին ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի ներկայացուցչական խումբին: 1949ին կը հրաւիրուի Սուրիոյ բանակի խումբ, որուն խմբապետութիւնը կը կատարէ մինչեւ 1964: Միաժամանակ, ան մաս կը կազմէ Սուրիոյ Ֆուլթպոլի ազգային խումբին:

Սուրիոյ բանակի խումբին հետ, եղբ. Գէորգ կը մասնակցի միջազգային շարք մը մրցաշարքերու՝ Միջերկրականեան խաղեր (1951՝ Եգիպտոս, 1954՝ Սպանիա), միջ-արաբական խաղեր



Եղբ. Գէորգ Կրպոյեան եւ հունգարիոյ երբեմնի աստղը՝ Փուշքաշ, դրօշներու փոխանակումի պահուն, 1954ին:



2007. եղբ. Գէորգ Կրպոյեան էլ. Սի. Միլանի տնօրէն Միքայէլ Մանֆրէտտին կը ստանայ իր յուշանուէրը:

(1957՝ Լիբանան), աշխարհի զինուորական ախոյեանութիւններ եւ այլն:

1980ական թուականներուն եղբ. Գէորգ վարած է Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբին մարզիչի պաշտօնը: Եղած է մասնաճիւղի վարչութեան անդամ եւ մասնակցած է Սուրիոյ Շրջանային ժողովներուն, իբրեւ Դամասկոսի ներկայացուցիչ:

Տարիներու իր ծառայութեան համար, եղբ. Գէորգ արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Մառայութեան» եւ սուրիական բանակի «Մարգիկ»ի շքանշաններուն: Իսկ վերջին տարիներուն ան պատուըւած է իտալական էջ.Մի.Մի.լան ակումբի յատուկ յուշանուէրով:

Բի՛ւր յարգանք իր վաստակին եւ յիշատակին:



Եղբ. Գէորգ Կրպոյեան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական տարագով, Հալէպ:


«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Տէր եւ տիկին Ատոմ եւ Սելլա Թնճուկեաններ \$200

ԲԱՐԵԿԻՐԹ ԸԼԼԱՆՔ

Մ Ա Ք Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ



Բարեկիրթ մարդուն մտահոգութիւններէն մէկն է իր մարմնին մաքրութիւնը: Մարմնի մաքրութիւնը նշան է նաեւ հոգիի մաքրութեան: Մաքուր մարդը դիւրութեամբ բարեկամ կը շահի եւ առողջ կ'ապրի:

Ձեռքերու մաքրութիւնը մարդը շատ մը հիւանդութիւններէ հեռու կը պահէ, իսկ աղտոտ ձեռքերով դիմացիներն ձեռքը սեղմելը անվայել է:

Կրթութեան հակառակ է հրապարակաւ եղունգ կտրելը, իսկ յօրանջելու եւ հագալու ժամանակ պէտք է գոցել բերանը:

Կրթութեան դէմ է նաեւ ուրիշին առջեւ կօշիկները հանելը:

Բարեկիրթ անձը կը հագուի իր միջավայրին եւ կեանքի պայմաններուն համաձայն եւ խնամք կը տանի իր զգեստներուն:

- Ահաւասիկ քանի մը օգտակար թելադրանքներ.-
- Ձգեստներուդ նման մաքուր եւ կոկիկ պահէ անձնական առարկաներդ. սեղանդ, գիրքերդ... այսինքն ինչ որ կայ շուրջդ:
 - Ընդհանրացած գէշ սովորութիւն է անուռ գրել պատերու եւ գրասեղաններու վրայ:

- Երբ կօշիկներդ ցեխոտած են, մի՛ մտներ որեւէ տուն առանց նախապէս մաքրելու եւ սրբելու զանոնք: Եւ վերջապէս, սովորութիւն ըրէ տանդ կամ ինքնաշարժիդ պատուհանէն դուրս բան չնետելու:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ


ՇՈՔԵԿԱՌՔԸ

Շոգեկառքը առաջին անգամ ստեղծուած է 4000 տարիներ առաջ, Բաբելոնի ժողովուրդին կողմէ:

Տարիներու ընթացքին, ան փոփոխութեան ենթարկուած է եւ 1804ին անգլիացի Ռիչըրտ թրեվիթիկի գայն հասցուցած է իր այսօրուան վիճակին:

Շոգեկառքին անիւները կ'ըլլան պողպատէ՝ շարժելու համար զանազան իրերու եւ ճամբորդներու ծանրութիւնն ու կշիռքը: Անոր անիւները կ'անցնին պողպատէ շինուած երկաթուղիներէ:

Անցեալին, շոգեկառքը կ'աշխատէր հետեւեալ ձեւով.- այրուած ածուխը կ'եռացնէր ջուրը, եւ ջուրէն ելած շոգին կը կատարէր վառելանիւթին գործը: Հետագային, շոգեկառքերը սկսան գործել էլեկտրական հոսանքով, իսկ ներկայիս ստեղծուած են TGVները (Train à grande vitesse), այսինքն մեծ արագութեամբ շոգեկառքերը, որոնք կ'աշխատին նաեւ էլեկտրականութեամբ եւ 6 ժամուան մէջ կը կտրեն 1176 քլմ. ճամբայ:






ՆԵՐԿԷ՛



ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Թ-Ի-Թ-Ե-Ռ



Ես քիթեռ եմ, ոսկեթեւ եմ,
Թըռվըռում եմ, ա՛յ, այսպէս,
Ծաղիկներից հոտ եմ քաշում,
Հիւթ եմ առնում, ա՛յ, այսպէս:

Երբ Լիլիկը, չար բալիկը,
Հէնց ուզում է ինձ բռնել,
Ես թռչում եմ, շուտ փախչում եմ,
Թեթեւ, թեթեւ, ա՛յ, այսպէս:



ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Թ-Ի-Թ-Ե-Ռ-ՆԻԿԸ



Թ թեռնիկը կը պատկանի միջատներու ընտանիքին: Գոյուկթիւն ունի երկու տեսակ թիթեռնիկ-գիշերային եւ ցերեկային:

Գիշերային թիթեռնիկին գոյնը մուկ կ'ըլլայ, իսկ ցերեկայինը՝ շատ գեղեցիկ գոյներ կ'ունենայ:

Թիթեռնիկի մը կեանքը

կ'անցնի չորս տարբեր հանգրուաններէ: Իւրաքանչիւր հանգրուանին ան բոլորովին տարբեր կերպարանք կ'ունենայ: Էգ թիթեռնիկը հազարներով պզտիկ հաւկիթներ կ'ածէ տերեւներու եւ կանաչ կոթերու վրայ: Այս հաւկիթները կը վերածուին թրթուրի, որ կը նմանի որդի: Թրթուրը իր ժամանակը կ'անցնէ ուտելով եւ շատ արագ կը մեծնայ: Թրթուրը որդի իր կերպարանքը կը կորսնցնէ, կը կծկուի ինքն իր վրայ, մետաքսէ մաշկ մը կը կապէ իր շուրջ եւ անշարժ կը մնայ մինչեւ որ վերածուի թիթեռնիկի: Թիթեռնիկները կը գաղթեն դէպի տաք եւ արեւոտ երկիրներ: Անոնք գոյնզգոյն կ'ըլլան եւ ծաղիկներէն հիւթ կը քաղեն:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Գոյնզգոյն է, բայց
ծաղիկ չէ: Դուն
կ'որոշես թէ ի՞նչ է ան:
(Պատասխանը՝ յաջորդի:
Նախորդ հանելուկին պատասխանն էր ՌՈՒՂԹ):



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱՋԱԼԵՐ ԱՆՂԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անղամ»ներու դրուբին: Թերթին «Քաջալեր անղամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անղամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անղամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՉՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիլեան, Յակոբ Թոքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էիրամճեան, Արթո Սարգսրեան, Անահիտ Սարգսրեան, Տիգրան Հաճեթեան, Բիւզանդ Լախոյեան, Հրանդ Տէտեան, Արթին Մաժակեան, Արա Իմամճեան, Պետրոս Պաքըրճեան, Բաբգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան, Գառնիկ Նազարեթեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորճ Տաթեան:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՁՈՆԱԿԱՆ

1. Անգլիոյ ֆուլթպոլի կազմերէն (երկու բառ):
2. Արդարեւ - 601 - Հիւանդոտ:
3. Այբուբենէն - 200 կրամ - Բայց:
4. Հոլանտացի ֆուլթպոլիստ - Սպասէ՛:
5. Արեւելեան տիտղոս - Կրկնուած բաղաձայններ:
6. Բորբոքում - Փորթուգալեան նախկին գաղթավայր՝ Հնդկաստանի մէջ:
7. Ջեփիւռ - Հայոց կաթողիկոս՝ Գրիգոր Դ - Կրկնուած բաղաձայններ:
8. Աստուած - Երաշխէպ:
9. Կուսակց - Իրանի նաւթով հարուստ շրջաններէն:
10. Արական օտար անուն - Իգական «նա» - Անմարդաբնակ:
11. Թարթափ - Մթազնիլ, աղօտանալ:
12. Լ.Օ.Նաչի մասնաճիւղերէն - Ցուցական ածական - Փուճ:
13. Տառի մը անունը - Նախահայրեր - Խողովակաձեւ:
14. Խաղողի ողկուզիկ - Ռուբէն Որբերեանի երկերէն - Ձայնանիշ:
15. Պետական գրագիր - Հակիթի դեղնուց:
16. Հայաստանի հնավայրերէն - Խաղաթուղթի մէկնոց:
17. Ցասկոտ, բարկացոտ - Արատ:
18. Եգիպտական աստուած - 3400:
19. Տիգրան Օտեանի գրչանունը - Արական անուն - Անգլիացի ֆուլթպոլիստ՝ Ռուներ:
20. Կարծրակեղեւ պտուղ - Անարժէք - Արդի:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Նանթի ֆուլթպոլի խումբին ֆրանսահայ մարզիչը - Ժուռ:
2. Բիժ - Հայոց Լ. ամիսը - Շաղէ՛ - Ցուցական ածական:
3. Սուտանի լիճերէն - Բանտի ընկեր - Գինդ:
4. Հիւանալի, անմաման - Լիբանանի գետերէն:
5. Ցատկուլթիւն - Տարբեր կրօնքներէ կազմուած:
6. Անճիւղ, յերիւրածոյ - Շարժական մահճակալ:
7. Մակասիւն - Ունայնութիւն - Տառի մը գրացիները:
8. Գիրուց - Սերպ թենիսիստներ:
9. Իրերայաջորդ գիրեր - Այս կերպով - Կարծր շինանիւթ - Մատղաշ տունը:
10. Ցանդիմանութիւն կամ ուժգնութիւն - Էական բայ:
11. Ծովազոյն (հակ.) - Երգիք - Ժխտական պատասխան:
12. Ուռնակ - Կիլիկեան լեռնաշղթայ:
13. Ճակածան, յայրատ - Կերակրուել - Արական անուն:
14. Ցուցական դերանուն - Երիվար - Շարունակ - Բարձր ծառատեսակ - Գրաբար՝ ո՞ւր:
15. Զօրեւ - Ազգանուէր Հայոհեաց Ընկերութեան հիմնադիր հայ գրագիտուհին - Թիւրակն - Կշիռ ունեցող:

ԹԻՒ 170 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՑՈՒՄ

1	Ճ	Օ	Վ	Ի	Լ	Ֆ	Ր	Ի	Տ	Ց	Ո	Ն	Կ	Ա	
2	Ե	Ր	Տ		Ե	Ե	Մ		Ձ	Ր	Ի				
3	Ր	Է		Ո	Ի	Ռ	Ն	Ա	Կ		Ն	Ք			
4	Մ	Ն	Ա	Ս		Ն	Ի	Ն	Ա		Ի	Ս			
5	Ա	Ք	Լ	Ո	Ր	Ա	Մ	Ա	Ր	Տ		Ը			
6	Կ		Ա	Խ		Ն	Կ	Լ	Ա	Կ	Ո	Ն	Ի	Ա	
7	Վ	Ա	Ձ		Ե	Տ	Ք	Բ	Ա	Ր	Ի	Ն	Ք		
8	Ա	Տ	Ա	Կ		Օ	Ն	Ք	Ա	Ր	Ի	Օ		Հ	Ա
9	Ր	Ե	Ն	Ա	Կ	Ա	Ն		Փ		Ջ	Ղ	Ե	Ա	Ր
10	Ս	Ա		Պ	Ո	Լ	Ո	Ճ	Ի	Կ	Ի	Ր	Մ	Ա	
11	Ե	Ն	Ք	Ա	Հ	Ո	Ղ	Ն			Ք	Ե	Փ		
12	Ն		Ա	Ր	Ա	Ն		Ս							
13	Ի	Ս	Կ		Կ	Ս	Կ	Ի	Մ						
14	Կ	Ր	Ա	Մ		Օ	Ղ	Ա	Կ						
15		Ի	Ր	Ն	Ա		Ի	Մ		Վ	Ա	Ս	Ն	Լ	
16	Գ	Ն	Գ	Ա	Կ					Ն	Ա	Ո	Ձ	Ն	Ի
17	Է	Ք		Ց	Օ					Ա	Ր	Ա	Ր	Ա	Լ
18	Ս		Փ	Ո	Ս					Ն	Ա	Ց	Լ	Ի	
19		Ձ	Ո	Ր						Ե	Ն	Ն	Ե	Մ	Ա
20	Վ	Ա	Ր	Գ	Ե	Ն	Ի	Ս		Ք	Ա	Ն	Ս	Ա	Ս

Հ.Մ.Ը.Մ.Ի ԲՈՒԿՅԹԻ ՖՈՒԹՂՈՒԻ ԽՈՒՄԲԸ

